

ԼԱԹՎԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ ընդունեց Լաթվիոյ պաշտպանութեան նախարար Լինաս Լինկէիչուսը, որուն գլխաւորած պատուիրակութիւնը ետօրեայ այցելութեան մը համար Հայաստան կը գտնուի: Հանդիպումին մասնակցելով, որ այս այցելութիւնը Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան: Ընդգծելով, որ այս այցելութիւնը Հայաստանի պաշտպանութեան նախարարին անցեալ տարի Լաթվիա կատարած այցելութեան ընթացքին ձեռք բերուած համաձայնութիւններու եւ սկսած երկխօսութեան շարունակութիւնն է, կողմերը անդրադարձան համագործակցութեան վարձատրութեան հնարաւորութիւններուն: Քննարկուեցան յատկապէս բանակին եւ ռազմական կրթութեան մարզին մէջ գործակցութեան կարելիութիւնները: Լաթվիոյ պաշտպանութեան նախարարին համաձայն՝ Եւրոպական Միութեան եւ ՕԹՍՆԻ հետ եւ երկրին համագործակցութեան հոլովոյթը կրնայ օգտակար ըլլալ Հայաստանին: Լինաս Լինկէիչուսի գլխաւորած պատուիրակութիւնը տեսակցութիւն ունեցաւ նաեւ Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հետ:

ՐՍ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՁՆԵՐՈՒ

ԱՐՏԱԵՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԻԱ ԴՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐՈՒ ԴԻՄԱԾ Է ԱՐԴԷՆ

ԳԱՄԱՍԿՈՍ, 22 (ԱՅՓ).- Ամերիկեան ճնշումներուն դիմաց տեղի տալով, անցնող քանի մը օրերուն Սուրիա յաւելեալ գործակցութիւն ցուցաբերած է շարք մը հարցերու գծով, որոնց կարգին են Իրաք եւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը:

Սուրիա արդէն իսկ փակած է Իրաքի հետ սահմանը, իսկ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի ըսաւ, որ այսուհետեւ Իրաքցիները մուտքի արտօնագիր պէտք է ունենան Սուրիա մտնելու համար:

Սուրիոյ այս կէցուածքը պատճառ դարձաւ, որ Ուաշինկթըն գոհունակութիւն յայտնէ: Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչըրտ Պաուլը ըսաւ, որ Դամասկոս առած է դրական քայլեր, որոնք ցոյց կու տան, թէ անիկա կը բաժնէ Ուաշինկթընի մտահոգութիւնները: Պաուլը ղիտել տուաւ, սակայն, որ Դամասկոսէն կը պահանջուի յայտնել, թէ ո՞ր կը գտնուին ցարդ Սուրիա ապաստանած իրաքցի պաշտօնատարները:

ՍՈՒՍԱ - ԱՍԱՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Ուուսա երէկ հանդիպում ունեցաւ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի հետ: Հանդիպումին աւարտին, Ուուսա ըսաւ, որ Ասատի հետ խորհրդակցած է Իրաքի եւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին մասին:

Ուուսա Յորդանան ուղղուելէ առաջ հանդիպում ունեցաւ նաեւ Շարէիի հետ:

ԿՈՉ

1915ի Մեծ Եղեռնի 88ամեակի ոգեկոչման նախօրեակին, կոչ կ'ուղղենք մեր սիրելի ժողովուրդին բոլոր պատկերներուն՝ պատրաստուելու ամբողջական եւ համայնական մասնակցութեամբ ոգեկոչելու Մեծ Եղեռնի մեր առաւել քան մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը, Հինգշաբթի, 24 Ապրիլին, այնպէս ինչպէս կը վայելէ նահատակներուն կտակին:

Ապրիլ 24ը ողջ հայութեան համար սուկ յիշատակարժան թուական մը չէ, նոյնիսկ հայ ժողովուրդին արժանապատուութիւնն է, ապրելու իրենքն է եւ իր հայրերու դարաւոր եւ անժամանցելի իրաւունքին տէր կանգնելու վճռականութիւնն է:

Ապրիլ 24ը հայութեան կենսունակութեան չափանիշն է: Այդ կենսունակութեան յորդոտատ ցուցանիշը նահատակաց օրուան մեր արժեւորումն է՝ մեր մասնակցութեամբ:

Այս առիթով, իրաքանչիւր հայու կոչ կ'ուղղենք, Հինգշաբթի օր, 24 Ապրիլ 2003ին, դադրեցնելու ամէն տեսակի աշխատանք եւ ուղղուիլ դէպի Մայրավանք Անթիլիաս, ներկայ ըլլալու հանդիսաւոր Ս. պատարագին, մասնակցելու Նահատակաց Մատրան առջեւ անշիրմ մեր նահատակներուն յիշատակին ի յարգանս պետեղուած ծաղկեպսակներուն եւ յատկապէս լսել վեհափառ հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին պատգամը, եւ ըլլալ մէկ բռունցք, մէկ տրոփ եւ մէկ կշռոյթ:»


ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՅՈՅ

ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐ ԶՐԿՈՒԵԼԷ ԵՏՔ՝ ԸԱՐԻՒՐ ԸԱԶԱՐԱԿՈՐ ՇԻՒՆԵՐ ԶԱՐՊԱԼԱՅԻ ՄԷՋ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՈՒՍԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ



Հարիւր հազարաւոր շիր իրաքցիներ երէկ հաւաքուեցան իրենց համար Սուրբնկատուող Քարպայայի մէջ: Շիրիները տարիներէ ի վեր զրկուած էին այս ուխտագնացութենէն, որ արգիլուած էր Սատտամ Հիւսէյնի կողմէ: Քարպայա գտնուող ամերիկեան ուժերը հեռու մնացին հաւաքէն, ուր հազարաւոր շիրներ հակամերիկեան արտայայտութիւններ կը բացագանչէին: Շիրի կրօնապետեր կը նախատեսեն, որ մէկ միլիոն իսլամ մասնակցի ուխտագնացութեան, նշելու համար Սոհամէտ մարգարէին թոռնիկին՝ Ալիի սպանութեան յիշատակը: Այս հանդիսութեամբ, Իրաքի շիրները կ'ուզեն փաստել իրենց ներկայութիւնը երկիրի մը մէջ, որուն 25 միլիոն բնակչութեան թէեւ 60 առ հարիւրը կը կազմեն, սակայն ցարդ զրեթէ աննշան մասնակցութիւն բերած են իշխանութեան մէջ: Շիրները թէեւ ուրախ են, որ ամերիկացիները տապալած են Սատտամի իշխանութիւնը, սակայն անոնք շատ ալ գոհ չեն ամերիկեան ուժերու ներկայութենէն: Քարպայա դիմած ուխտագնացները մէկ մասը կը պոռար. «Ո՛չ Ամերիկայի, ո՛չ Սատտամի, ո՛չ բռնատիրութեան, ո՛չ Իսրայէլի»:

Քարպայայի հաւաքը տեղի կ'ունենար այն պահուէն, երբ Պաղատի մէջ շիրներ երկրորդ օրն ըլլալով ցոյցեր կը կազմակերպէին, իրրեւ բողոք շիր կրօնաւոր շէյխ Մոհամէտ Ֆարթուսիի ձերբակալութեան դէմ: Աւելի ուշ սակայն, ցուցարարները ուրախութեամբ բացագանչուեցին իրենց կողմէ իրաքեան Քիւրտիստան այցելած էր 1991ին: Կարնըր նոյնքան խանդավառ ընդունելութեան չէր արժանացած Պաղատի մէջ, զոր այցեքանի եւ Սիւլէյմանիէի մէջ քիւրտ ուսանողներ ծաղիկներով զիմաւորեցին:



Կարնըր եւ Թալապանի

ԿԱՐՆԵՐ ԸՆԴԴՊՈՒՄ ԿՈՒՆԵԱՅ ԲԻՐՏ ԴԵԿԱԿԱՐՆԵՐՈՒ ՇԵՏ

Իրաքի մէջ ամերիկեան քաղաքային իշխանութեան պատասխանատու ձէյ Կարնըր երէկ հանդիպում ունեցաւ քրտական գլխաւոր երկու շարժումներու ղեկավարներու հետ: Հանդիպումը տեղի ունեցաւ Տուքանի մէջ, ուր Կարնըր տեսակցութիւն ունեցաւ Թալապանիի եւ Մատու Պարզանիի հետ, որոնք ղեկավարած շարժումները 1991էն ի վեր կ'իշխեն Հիւսիսային Իրաքի մէջ: Տուլած էր երկու շարժումները: Պարզանիի եւ Թալապանիի հետ Կարնըրի ունեցած հանդիպումներուն ընթացքին արժարժուած նիւթերուն մասին մանրամասնութիւններ չփոխանցուեցան: Միւս կողմէ, ամերիկեան ուժերը երէկ հաստատեցին ձերբակալութիւնը Սատտամի փեսաներէն՝ Ժամալ Մուսթաֆա Ապտալա Մուլթանի, որ «սեւ անուանացանկին» մէջ կը գրաւէ 40րդ դիրքը: Ամերիկեան ուժերը Պաղատի բնակարաններէն մէկուն մէջ, պատի մը ետեւ գտած են 600 միլիոն տոլար: Ամերիկացի բանրեր մը յայտնեց, որ տակաւին յստակ չէ եթէ տոլարները իրական են: Յստակ չէ նաեւ, թէ ի՞նչպէս պիտի ծախսուի գումարը, եթէ հաստատուի որ կեղծ չէ: Մարդկային իրաւունքներու պաշտպան իրաքեան շարժում մը յայտնեց, որ Սատտամի վարչամեքենային պատկանող տասնեակ մը շէնքերէ յայտնաբերուած են տասնեակ հազարաւոր «խիստ գաղտնի» որակուած փաստաթուղթեր, որոնք արձանագրութիւններ են ձերբակալութիւններու, բանտարկութիւններու, հարցաքննութիւններու եւ գնդակահարումներու: Շար.ը՝ էջ 10

ԱՅՍՕՐ ԵՐԵՒԱՆ ԿԸ ՀԱՍՆԻՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐ

Այսօր Երեւան կը հասնին Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նախնորական առաքելութեան ժամանակաւոր յանձնաժողովի անդամները եւ Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղարի անձնակազմի ներկայացուցիչ Նաթալիա Վուտովա: Պատուիրակութեան մաս կը կազմեն Անտրէաս Կրոս (Զուիցերիա), Զգրաւկա Պուսիչ (Նորուեթիա), Անտրէ Կուակեստազ (Նորվեգիա), Ժիրի Մաստալկա (Չեխիա), Ինչպէս նաեւ Լորտ Ռասըլ Ճոնսթըն (Իրիտանիա), Վլաստիմիր Դրանով եւ Ֆրիտա Ճամալ՝ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի քարտուղարութեան նշան:

Պատուիրակութիւնը այսօր Ազգային ժողովին մէջ հանդիպում պիտի ունենան Ազգային ժողովի նախագահ Արմէն Նաչատրեանի հետ: Տեսակցութիւններ տեղի պիտի ունենան նաեւ Հայաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանի, Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովի նախագահ Արտակ Սահրադեանի եւ յանձնաժողովի անդամներուն հետ:

Պատուիրակութեան անդամները վաղը հանդիպում պիտի ունենան Հայաստանի մէջ ԵԱՀԿի գրասենեակի պատասխանատուին, ապա՝ ընդդիմադիր կուսակցութիւններու ներկայացուցիչներուն հետ: Անոնք նաեւ հանդիպում մը պիտի ունենան Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հետ:

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԱՃ Կ'ԱՐՉԱՆԱԳՐԷ

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը իր տեղեկութիւնները ազդեցական աղբիւրներէ քաղելով կը յայտնէ, որ Ապրիլ 1ին Ազրպէյճանի բնակչութեան քիւր կը կազմէր 8 միլիոն 218 հազար մարդ: 2003ի առաջին երեք ամիսներուն ընթացքին Ազրպէյճանի բնակչութիւնը բազմացած է 15 հազարով: Նշեալ ժամանակաշրջանին ընթացքին ծնած են 28,8 հազար երեխաներ եւ մահացած է 12,7 հազար հոգի: «Արմինֆօ» կը հաղորդէ նաեւ, որ այժմ Ազրպէյճանի բնակչութեան 51 առ հարիւրը քաղաքաբնակներ են, իսկ 49 առ հարիւրը՝ գիւղաբնակներ:

ԿԱՐԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ



«ԱԶԴԱԿ»Ի ԱՊՐԻԼ 24Ի ԲԱՅԱՌԻԿԸ
Ստանալ «Ազդակ»ի ցրուիչներն եւ գրախանութներն:
Սակ՝ 5000 Լ.Ռ.

ԸԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 88ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
Տեղի կ'ունենայ Կինգաբքի, 24 Ապրիլ 2003, կէսօրուան ժամը 12:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» քառերասրահին մէջ:

ԴԱՍԱՍԿՈՍՒՄ ՄԵՋ

ՓՈԽ ՎԱՐՉԱՊԵՏ ՖԱՐԷՍ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ԱՍԱՏԻ ՀԵՏ

Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ երէկ Գամասկոսի մէջ ընդունեց փոխ վարչապետ Իսամ Ֆարէսը, որուն հետ քննարկեց ներքին լիբանանեան հարցեր, Լիբանան - Սուրիա երկկողմանի յարաբերութիւններուն առնչուող խնդիրներ, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազգային նորագոյն իրադարձութիւնները:

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻՆ ՄԵՋ

ՊՐՐԻ ԵՒ ՀԱՐԻՐԻ ԳՈՒՍԱՐԵՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ



Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի եւ Վարչապետ Իսամ Ֆարէսը ընդունեցին Պրրիի եւ Հարիրիի ղեկավարած շտաբի անդամները:

Պրրիի հանդիպումներն ունեցաւ նաեւ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Թան Օպէյտի, նախկին նախարար Նեպիհ Պալտունի եւ երեսփոխան Ֆայէզ Զարնի հետ:

Քննարկուեցան ներքին լիբանանեան հարցեր եւ շրջանային իրադարձութիւնները:

Միւս կողմէ, Պրրի կոչ ուղղեց երեսփոխաններուն՝ ներկայ գտնուելու յառաջիկայ Երեքշաբթի 28 եւ 29-ը երեքշաբթի 30 Ապրիլին կայանալիք խորհրդարանի լիազուածար նիստին, որուն ընթացքին պիտի քննարկուի կառավարութեան աշխատանքային ծրագիրը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՂԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Վարչապետ Իսամ Ֆարէսը երէկ Քորթաթէմի մէջ գլխավորեց ժողով մը, որուն ընթացքին շարունակեց կառավարութեան աշխատանքային ծրագիրի քննարկումը՝ նախարարական յատուկ յանձնախումբին ներկայութեամբ:

Առաւօտեան ժամը 10:00ին մինչեւ կէսօրէ ետք ժամը 2:00 տեւած ժողովին ընթացքին կառավարութեան աշխատանքային ծրագիրը բանաձեւուեցաւ եւ կառավարութեան վաղուան ժողովին պիտի քննարկուի վերջնականապէս վաւերացուելու համար:

Միւս կողմէ, վարչապետ Ֆարէսը երէկ հանդիպում մը ունեցաւ ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըրի հետ:

Քննարկուեցան նախարարութեան եւ երկրին ապահովութեան յատուկ հարցերը:

ԳԱՍԱՍԿՈՍ ԳԱՍԱՍԿՈՍ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ 88ՐԴ ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ Բանախօս՝ ԵՐԱՉ ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 24 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 6:00ին, «Սէյիտեք Տիմաշք» եկեղեցւոյ սրահին մէջ: ԸՄԱՍՁԱՅԻՆ «Լ. ՇԱՆՁ» ՍԱՍԱՃԻԴԻԿ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԸԱՅԿԱՎԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԱՅԻՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ «ԼՈՒՍԱՍՈՒՏ» ԸՆԴՀԱՆՈՒՐ, մշակութային, ընկերային եւ տեղեկատուական ծրագիր՝ «Թելե Լիւմիեր» կայանէն: Առաջին հաղորդումը այսօր՝ 23 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 6:00ին, եւ այդուհետեւ իւրաքանչիւր շաբթուան Գործընթացի օրը, նոյն ժամուն: ԸՈՎԱՆԱՐՈՒԹԵԱՆ՝ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԸԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆԻՆ

ԼԻԲԱՆԱՆ ԻՐ ՆԵՐՔԻՆ ԸԱՍԵՐԱՇԽՈՒԹԵԱՄՔ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՐԿԻՐ ՄԸ ԴԱՐՁԱԾ Է

ԿՐՍԵ ՆԱԽԱԳԱՎԱՅ ԼԱՀՈՒՏ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ հաստատեց, որ իրաքի ժողովուրդը միակն է, որ իրաւասութիւն ունի որոշելու իր երկրին ապագան եւ վարչակարգի ձեւաւորումը, գործադրելով ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի որոշումներն ու բանաձեւերը: Նախագահ Լահուտ երէկ Պաշպուտայի մէջ ընդունեց լիբանոնացիներու ֆինլանտական յանձնախումբ մը, որոնց յայտնեց, թէ Իրաքի կայունութեան ամրապնդման եւ վերաշինութեան միակ միջոցը կը մնայ միջազգային օրինակներով, որ նաեւ միակ երաշխիքն է իրաքի ժողովուրդին ապահով ու կայուն ապագային, որ կը տրեւն արդարութիւնն ու օրէնքի գործադրութիւնը:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ արաբական երկիրներ, որոնք կը փափաքին օժանդակել Իրաքի վերաշինութեան աշխատանքին, պէտք է միջոցներ ունենան եւ առիթներ տրուի անոնց կատարելու իրենց նիւթական օժանդակութիւնները՝ ներդրումներու ձեւով, ինչպէս նաեւ օժանդակելու, որ Իրաքի վերակառուցմանը կարգաւորուի բաժնակցութեամբ:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ Միացեալ Նահանգներ պէտք է լինի «գիտնալ» որ Միւնաղրական օրէնքներու հիման վրայ, հետո՛ւ՝ արտաքին ամէն տեսակի ճնշումներէ: Նախագահ Լահուտ պատասխանելով ֆինլանտական պատուիրակութեան մէկ հարցումին շեշտեց, որ Լիբանան իր ներքին համաշինութեան մէջ օրինակելի երկիր մը դարձած է ամբողջ աշխարհին համար, որ կը շատայ տարբեր ցեղերու եւ համայնքներու մի-

ջեւ յարաբերութիւնները համակարգել:

Նախագահ Լահուտ անդրադառնալով Լիբանանի կայունութեան ընդգծեց, որ կայունութեան կերտման հիմնական միջոցներն են Լիբանանի ժողովուրդին միասնականութիւնը եւ անոնց ցուցաբերած հասկացողութիւնը իրենց երկրին իշխանութեան որդեգրած ազգային ռազմավարութեան, որ կը համընկնի Սուրիոյ քաղաքականութեան:

Նախագահ Լահուտ հաստատեց, որ Լիբանան դէմ է ահաբեկչութեան եւ ծայրայեղութեան, աւելցնելով, որ Լիբանան իրաքեան տագնապին ու Իրաքի դէմ պատերազմին ամբողջ տեսողութեան դատաւարտեց միջազգային օրինակականութեան եւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի բանաձեւերու բռնաբարումը:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ Իսրայէլն է, որ կը գտնուի Լիբանանի ու Սուրիոյ դէմ ուղղուած սպառնալիքներու ետին, շեշտելով, որ այդ սպառնալիքները անիմաստ են:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ Միացեալ Նահանգներ պէտք է լինի «գիտնալ» որ Միւնաղրական օրէնքներու հիման վրայ, հետո՛ւ՝ արտաքին ամէն տեսակի ճնշումներէ: Նախագահ Լահուտ պատասխանելով ֆինլանտական պատուիրակութեան մէկ հարցումին շեշտեց, որ Լիբանան իր ներքին համաշինութեան մէջ օրինակելի երկիր մը դարձած է ամբողջ աշխարհին համար, որ կը շատայ տարբեր ցեղերու եւ համայնքներու մի-

կանութեան համար:

«Լիբանան Միացեալ Նահանգներուն հետ կը բաժնէ ամբողջութեամբ յարաբերութիւններ պետական եւ ժողովրդային մակարդակի վրայ, սակայն նաեւ այդ մէջ կը պատճառ չէ, որ ամերիկեան վարչակազմին չյայտնենք մեր սեփական տեսակետը», յայտնեց նախագահ Լահուտ:

Նախագահ Լահուտ անդրադառնալ նաեւ Միջին Արեւելքի ապագային եւ շեշտեց, որ Իսրայէլ պատասխանատու է արաբա-իսրայէլեան տագնապի լուծման համար տարուող բոլոր ջանքերուն ձախողութեան:

«Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի առաջարկած խաղաղութեան ճամբու քարտէսը ամբողջովին կը հակասէ ՄԱԿի որոշումներուն, ինչպէս նաեւ պաղեստինցիներու տունդարձին, որովհետեւ Լիբանան կը մերժէ պաղեստինցիներու բնակեցումը եւ կը հաւատայ անոնց տունդարձ իրաւունքին», շեշտեց նախագահ Լահուտ:

Միւս կողմէ, երէկ նախագահական պալատ այցելեցին նախնախնայներ՝ Բարիս Բարիս եւ Ժան Լուի Բլլոտահի, նախկին նախարար Նեպիհ Պալտուն, երեսփոխան Միխայիլ Տահեր եւ Ֆրանսախօս երկիրներու կայմակերպութեան գերագոյն խորհուրդին մէջ նախագահ Լահուտի ներկայացուցիչ Շարի Ռեպը:

Հանդիպումներուն քննարկուեցան ներքին բանաձեւեան կացութիւնը, շրջանային իրադարձութիւնները:

ԿՈՉ

Թրքական պետութեան կողմէ կանխամատուած, ծրագրուած եւ հետեւողականօրէն իրագործուած Հայկական Յեղասպանութեան անցած են 88 տարիներ: Հայութեան բնօրրանին 5/6րդը պարպուած է իր բնիկներէն՝ 1,5 միլիոն հայերու Յեղասպանութեան եւ վանաւորութեան ընթացքով միջոցով: Յեղասպանութեան ճողոպրած հայերու սերունդները տակաւին ցիրուցան կը մնան աշխարհի տարածքին այլաւերումի ծանր պայմաններու տակ...

Յեղասպանութիւնը իր շարունակականութիւնը կ'ունենայ ոչ միայն իր հետեւանքներու ու ժգնութեան ազդեցութեան տակ, այլեւ թուրք-ալերիական համակարգուած քաղաքական վարքագիծի մը ընդմեջէն:

Արդարեւ, որքան այ քողարկուած իր ձեւին մէջ, այնուամենայնիւ ետպէս փանթըրքական ներշնչումով Թուրքիա սատար կը կանգնի Արաբիստանի, ուր 1988-90 իրագործուեցան Սուվլայիթի, Պաքուի եւ Գանձակի կոտորածները, կազմել Հայկական Յեղասպանութեան նորագոյն արարք: Արցախի նախ հայաթափման ու ապա ստրկացման ազդեցութեան հետեւողական ձախողումներուն վտագահեռ, Թուրքիան հաղորդակցական պաշարումի տակ կը պահէ Հայաստանը:

Յստակ գործողութիւններով սերունդի կ'ենթարկուին հայաթափուած ու բռնագրաւեալ տարածքներուն վրայ գտնուող հայկական պատմամշակութային կոթողները, որպէսզի միանգամընդմիջտ ջնջուին այդ տարածքներու հայապատկանելիութեան քաղաքակրթական վկաները:

Միւս կողմէ, Թուրքիա իր հերքումի եւ պատմաշինարարական անդուլ ճիգերով, ինչպէս նաեւ՝ Յեղասպանութեան պատմութեան շուրջ երկխօսութեան որոգայթներով կը փորձէ շախախել Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման իրաւաքաղաքական հարթակը: Թուրքիոյ այս ճիգերուն սերտօրէն ներքաշուած է նաեւ Ալքըրպէյճանը եւ դերերը շրջելու նենգ մարտավարութեամբ՝ իբրեւ Կոն ներկայանալով կը փորձէ մոլորեցնել միջազգային հանրային կարծիքը: Հայ Դատի մարտահրաւերները բազմաձևակաւ են եւ կը պահանջեն ծրագրան աշխատանք ու Կոնողութիւններ, ինչպէս նաեւ՝ ԿԳՕՆՈՒԹԻՆ, յատկապէս՝ թրքական որոգայթները շրջանցելու ուղղութեամբ:

Հայ երիտասարդութիւնն ու ուսանողութիւնը ետպէս կը գիտակցին Հայ Դատի մարտահրաւերներուն եւ յանձնառու են համապատասխան լարումով բարձր պահելու ազգային պահանջատիրութեան շախիք խնդիր՝ բռնագրաւեալ մեր բոլոր հողերուն ապաստարանութեան եւ Հայաստանի ամբողջացման: Ուստի վերանորոգելու համար Հայ Դատի յանձնառութեան մեր ուխտը, հաւաքելի՛ք Կիլիկիոյ կաթողիկոսարանի շրջափակէն ներս, Չորեքշաբթի, 23 Ապրիլին, ժամը 8:30ին:

Պահանջատէր ե՛ք ու կը մնանք: Հ. Յ. Գ. ԼԵՄ Հ. Յ. Գ. ՉՈՍ

Advertisement for G. AYANIAN & SONS lighting fixtures. Includes images of various lamps and the slogan 'Vivez en lumière!'. Contact information: Dora, (01)265222/3/4/5/6 - Gemmayze, (01)447000-445396 - (03)627728/9. Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dim.net.lb www.ayanian.com

Advertisement for G. AYANIAN & SONS. Includes text: ԿՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՆԹԻԼԵԱՍԻ ՄԱՅՐԱԿԱՆՔԻՆ ՄԵՋ Հինգշաբթի, 24 Ապրիլին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ Սուրբ եւ անմահ պատարագով պիտի ոգեկոչուի յիշատակը Մեծ Եղեռնի մեկուկէս միլիոն նահատակներուն: Առաւօտեան ժամը 10:00ին Մայր տաճարին մէջ պիտի պատարագ եւ քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ Պատարագէն անմիջապէս ետք, Նահատակաց «Ս. Ստեփանոս» Յուշարձան - Մատուռին առջեւ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան հանդիսաւոր արարողութիւն, նախագահութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Սիրով կը հրաւիրուին մեր ժողովուրդի բոլոր գաւակները՝ ներկայ գտնուելու եկեղեցական արարողութեանց, լսելու վեհափառ հայրապետին պատգամը եւ արժանի յարգանք ընծայելու մեր բերաւոր նահատակներու անմահ յիշատակին: ԴԻՆԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Advertisement for G. AYANIAN & SONS. Includes text: ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ Հինգշաբթի, 24 Ապրիլին, Անթիլիասի Մայրապետ ուղղուելու եւ մեր սիրելի ժողովուրդին երթելով դիւրացնելու համար, յատուկ օթպիւսներ պատրաստ պիտի ըլլան Հինգշաբթի, 24 Ապրիլ 2003ի առաւօտեան ժամը 10:00ին հետեւեալ վայրերուն մէջ: - Ս. Վարդանանց եկեղեցւոյ առջեւ - Քաղաքապետարանի շէնքեր - Չաւարեան դաշտ - Ս. Աստուածածին եկեղեցի - Լէյլաւան - Ֆանար - Ռաուտա - բնակարաններ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԱԳՆԵՐ

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի 75ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Այս տարի «Համազգային» կրթական և մշակութային միությունը կը նշէ իր հիմնադրութեան 75ամեակը: Այս առիթով, «Համազգային» Արեւմտեան Ամերիկայի շրջանային վարչութիւնը ստեղծած է յորելեակաւ տօնակատարութեան յանձնախումբ մը, որ այս յորելեակաւ նշելու ձեռնարկներու ցանկ մը կը մշակէ:

Ցանկին մէջ առաջին հերթին նշուած են Միացեալ Նահանգներ ալիքով «Կոմիտաս» լարային քառեակին գոյգ համերգները, որոնք տեղի պիտի ունենան 11 Մայիսին Լոս Անճելէսի եւ 18 Մայիսին՝ Սան Ֆրանսիսկոյի մէջ:

1924 թուականին հիմնադրուած քառեակը ներկայիս աշխարհի մէջ ամէնէն հին լարային քառեակի համարուած ունի: «Կոմիտաս»-ի մէջ նուագած են աշխարհահռչակ հայ երաժիշտներ, իսկ ներկայիս անոր մաս կը կազմեն էտոլարտ թաղերուսեան (առաջին ջութակ), Սուրէն Հախնազարեան (երկրորդ ջութակ), Ալեքսանտր Կոստէան (ջութակ) եւ

Արամ Թալալեան (թաւջութակ):

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԿԸ ՆԿԱՏՈՒՆ

28 Մարտին Միացեալ Նահանգներու Քալիֆորնիա նահանգի Կլենտէյլ քաղաքին մէջ «Ռոզի եւ Ալեք Փիլիպոս» ազգային վարժարանի նորակառուց Ֆոնտին համար կազմակերպուած ձեռնարկին ընթացքին հանդանակուեցաւ 100 հազար տոլար:

Ձեռնարկին ներկայ էին Լոս Անճելէսի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Վալերի Մկրտումեան, ինչպէս նաեւ բազմաթիւ կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

Դպրոցի տնտեսական յանձնախումբի ատենապետ Սարգիս Պէրպէրեան հանդիսութեան ընթացքին նշեց. «Հակառակ այսօրու համաշխարհային լարուած կացութեան, այս ձեռնարկը ցոյց կու տայ, որ զբաղարան-մարզասրահի կառուցումը ո՛չ միայն մեր գաղութի բարի կամքն ու ցանկութիւնն է, այլ ամբողջ Միութեանը վարժարանի տնօրէնը իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց բոլոր

բարերարներուն եւ վարժարանի ուսուցչական կազմին, որոնց նուիրական եւ հետեւողական աշխատանքին շնորհիւ վարժարանին աշակերտները յուր յաջողութիւններու կը հասնին:

Միացեալ Նահանգներու Արեւմտեան թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Մարտիրոսեան բարձր գնահատեց գաղութի բարերարներուն վերաբերմունքը վարժարանին: «Ձեր գորակցութիւնը իր կապէս պէտք է նպաստէ դաստիարակչական եւ կրթական գործերուն», նշեց Մուշեղ եպս. Մարտիրոսեան:

ՖՐԱՆՍԱ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՁ» ՖՐԱՆՍԱՅԻ ՔՐԵԹԵՅ ՔԱՂԱՔԻՆ ՄԵՋ

Ֆրանսայի Քրեթէյ քաղաքին մէջ Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպան Էտուարտ Նալպանտեան եւ քաղաքապետ Լ. Քաթալան վերջերս կատարած են «Հայկական պարտէզ» հանդիսաւոր բացումը եւ մասնակցած են հայ ֆրանսական բարեկամութեան նուիրուած ծառատնկումին:

«Հայաստանին նուիրուած այս պարտէզին բացումը կու գայ լրացնելու Ֆրանսայի տարածքին վերջին տարիներուն բացուած տասնեակ մը յուշարձաններու, անուանաւորութեան հրապարակներու, փողոցներու եւ պուրակներու շարքը՝ նուիրուած հայ-ֆրանսական բարեկամութեան, Հայաստանին եւ Հայկական Ցեղասպանութեան զոհերու յիշատակին», նշած է Հայաստանի դեսպանը:

«Հայաստանի պարտէզ»ին բացման հետ միաժամանակ Կրեթայի մէջ կազմակերպուած են հայ մշակութիւնի օրեր՝ նուիրուած Կրեթայի Հայ Մշակութային Տան հիմնադրումին 25ամեակին:

Թէ՛ Քրեթէյի, թէ՛ Կրեթայի ձեռնարկներուն ներկայ գտնուած են Ֆրանսայի Ազգային Ժողովի երեսփոխաններ, շրջանային եւ քաղաքային իշխանութիւններու ներկայացուցիչներ, Ֆրանսայի տարբեր շրջաններէ

Ֆրանսահայութեան պատասխանատուներ եւ ներկայացուցիչներ:

«ԱՐՄԵՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

Վերջերս Փարիզի «Փալէ տէ Սփոր» սրահը 4 հազար հանդիսատեսի (մեծամասնութեամբ հայ) ներկայութեամբ հայ դարձաւ հայկական աւանդական արուեստի նոր մեկնարկներու մրցույթ:

Ֆրանսահայ կապույտ ինքնաշարժներու կազմակերպութեամբ, Հայաստանէն եկած արուեստագէտներ հայ մշակութիւնը ներկայացուցին՝ երգի-պարի եւ նուագի մարզին մէջ:

Այնչափ էր արդիակալանցման եւ արեւմտակալանցման հակումը թէ՛ նուագի եւ թէ՛ պարերու ոճին մէջ՝ միշտ մեկնելով ավանդական եղանակներէն: «Հայկական» իր երգերով հանդէս եկաւ նաեւ հայրենի հանրածանօթ երգչուհի Շուշան Պետրոսեան:

ՆՈՐ

ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՆԱՏԱ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԱՐՄԵՆ Ա. ՔԷՆՅ. ԻՃԻՍԱՆԵԱՆԻ «ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ» ՀԱՏՈՐԸ

Վերջերս Մոնրէպի մէջ լոյս տեսաւ Արմէն Ա. Քէնյ. Իշխանեանի «Երկու աշխարհ» հատորը, որ կը բովանդակէ մամուլին առաւելաբար «Հորիզոն»-ի եւ «Հայրենիք»-ի մէջ հեղինակին հրատարակած յօդուածները, որոնք ամփոփուած են 320 էջերու մէջ:

«Ահաւասիկ քեզի կ'ընծայեմ երկար տարիներու վրայ տարածուող ապրումներուն արգասիքը», կ'ըսէ հեղինակը իր սրտի խօսքին մէջ՝ յայտնելով, թէ գրած է հոգեկան զոհունակութեան համար, միեւնոյն ժամանակ այլ ընթացքով հաղորդակից դարձնելու այն ապրումներուն, որ ունեցած է իր ժամանակներու սերունդին մէջ: Երբեք չի կորուստը իր յաջողութեան հաշտութեամբ, Պիեռ-Պոլ Օփերայի եւ պալէի ազգային ակադեմիկան մեծ թատրոնին մէջ վերջերս տեղի ունեցած է նուագահանդէս մը:

«Երբ» խորագրով յառաջարանին մէջ Ժաք Ս. Յակոբեան կը խօսի հատորին ծնունդ տուող պատճառներուն եւ հեղինակին մասին՝ ըսելով. «Իւրաքանչիւր յօդուած պատուով մըն է՝ պարզօրէն եւ մատչելի լեզուով գրուած: Կեանքի փորձառութեան ընդմէջէն ազգային եւ քրիստոնէական լոյս տեսնուած արտացոլացումը ինքնին փաստը կը հանդիսանայ իւրաքանչիւր յօդուածի ընթացման աւարտին՝ խոկալու նոր իմաստի մասին»:

ՔՐԱՍՆՈՏԱՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՀԱՄԵՆԱՀԱՅԵՐԻ ԷԹՆՈԳՐԱՖԻԱ» ԳԻՐՔԸ

Լոյս տեսաւ «Համընդամանքերու էթնոգրաֆիա» գիրքը, որ Արեւմտահայաստանի շրջաններէն մէկուն՝ Համընդամանքութեան նուիրուած քանի մը հեղինակներու նիւթերուն ժողովածուն է: Գիրքին մէջ գետեղուած գլխաւոր աշխատութեան հեղինակը Քրայստիան Քրայստիան է: Այդ աշխատութիւնը հեղինակի քսանամեայ աշխատանքին արդիւնն է եւ միեւնոյն ժամանակ արժէքաւոր գիտական ու պատմական նիւթ է:

Հարաւային Ռուսիոյ հայերու «Երկրամաս» թերթին համաձայն, գիրքը լոյս տեսած է «Համընդամանք» հայկական գիտական տեղեկատուական - մշակութային կեդրոնի նախագահ Արտաւազ Թուրանցեանի քրտնաջան աշխատանքին շնորհիւ «Երկրամաս» թերթի թերթի թիւերէն արտատրուած է: Եւ «Երկրամաս»-ի մէջ հեղինակին հրատարակած յօդուածները, որոնք ամփոփուած են 320 էջերու մէջ:

ՊԻԵՆՆՈՒՍԻԱ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԳԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԹԻՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԵՐԳ

Պիեռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանատան նախաձեռնութեամբ, Պիեռ-Պոլ Օփերայի օփերայի եւ պալէի ազգային ակադեմիկան մեծ թատրոնին մէջ վերջերս տեղի ունեցած է նուագահանդէս մը:

«Երբ» խորագրով յառաջարանին մէջ Ժաք Ս. Յակոբեան կը խօսի հատորին ծնունդ տուող պատճառներուն եւ հեղինակին մասին՝ ըսելով. «Իւրաքանչիւր յօդուած պատուով մըն է՝ պարզօրէն եւ մատչելի լեզուով գրուած: Կեանքի փորձառութեան ընդմէջէն ազգային եւ քրիստոնէական լոյս տեսնուած արտացոլացումը ինքնին փաստը կը հանդիսանայ իւրաքանչիւր յօդուածի ընթացման աւարտին՝ խոկալու նոր իմաստի մասին»:

«Երբ» խորագրով յառաջարանին մէջ Ժաք Ս. Յակոբեան կը խօսի հատորին ծնունդ տուող պատճառներուն եւ հեղինակին մասին՝ ըսելով. «Իւրաքանչիւր յօդուած պատուով մըն է՝ պարզօրէն եւ մատչելի լեզուով գրուած: Կեանքի փորձառութեան ընդմէջէն ազգային եւ քրիստոնէական լոյս տեսնուած արտացոլացումը ինքնին փաստը կը հանդիսանայ իւրաքանչիւր յօդուածի ընթացման աւարտին՝ խոկալու նոր իմաստի մասին»:

ԹԵՐԱՍ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ

13 Ապրիլին Թեհրանի ազգային առաջնորդարան արգելեց Թեհրանի մէջ Ռուսիոյ դեսպան Ալեքսանտր Մարիասովի եւ հանդիպում մը ունեցաւ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ եպս. Սարգիսեանին, իրանի խորհրդարանի հայ պատգամաւորական խումբի անդամներուն եւ «Ալիք» օրաթերթի ներկայացուցիչներուն հետ:

Նշելով որ ինչպէս ամէն տարի այս տարի ալ 24 Ապրիլին իրանահայութիւնը համախումբ կերպով պիտի նշէ Մեծ Եղեռնի յիշատակը՝ իրբեւ յիշատակի եւ ոգեկոչման օր, Սեպուհ եպս. Սարգիսեան Ռուսիոյ դեսպանին իր գոհունակութիւնը յայտնեց Ռուսիոյ պետական Տումային կողմէ Հայկական Յեղասպանութեան պաշտօնական ճանաչման առնչութեամբ:

ԱՄՍՐԻԱ

ԱՀՄԱՏ ՆՈՒԹԻՈՒՆՆԵՐ ԱՄՍՐԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ

5 Ապրիլին աւստրահայկական մշակութային ընկերութեան հրահանգով Վիեննա այցելեց իրանցի հանրայայտ գրող, թարգմանիչ եւ մտաւորական, հայ մշակութիւնը բարեկամ Ահմատ Նուրիպատէ:

«Քաղին» տեղեկատուական գործակալութեան աշխատակից Ռաֆայէլ Թամարգեանցի համաձայն, Ահմատ Նուրիպատէ 9 Ապրիլին հայրենիքում իսոսած է Հայկական Յեղասպանութեան մասին իր անհիշուած ժամանակներու մասին առանձին գրոց մը:

Թեհրանի մէջ Ռուսիոյ դեսպանին հետ հանդիպումին ներկայ էին նաեւ իրանի խորհրդարանի հիւսիսային իրանահայութեան նախկին պատգամաւոր Վարդան Վարդանեան, ինչպէս նաեւ՝ իրանի մէջ Հայաստանի դեսպանատան խորհրդական Խոսրոս Ղուկասեան:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 88ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ա. Շուրճի կազմակերպութեամբ Լ. Յ. Լեւոնի «Շ. Միսաքեան» մասնաձեռնը, Չորեքշաբթի, 23 Ապրիլի երեկոյեան ժամը 8:30ին, «Շտուրիկ» սրահին մէջ:

Բ. Ժողովրդային հանդիսութիւն՝ կազմակերպութեամբ Լ. Յ. Այնճարի դաստիարակչական մարմինին:

Կը բանախօսեն՝
ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆ
ԸՆԿ. ՏՈՔԹ. ԷԼԻ ԹԱՇԾԵԱՆ

●Գեղարուեստական յայտագիր

Կինոգրքի, 24 Ապրիլի կեսօրէ ետք ժամը 5:00ին, «Շտուրիկ» սրահին մէջ:

Լ. Յ. Այնճարի ՂԱՍ. ՍԱՐՍԻ

www.aztagdaily.com

Հ. Յ. Լ. Լեւոնի

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

●ԱՅՆՃԱՐ

Կազմակերպութեամբ՝ Լեւոնի «Շ. Միսաքեան» ՄԱՍՆԱՏԻՐԻՆ Բանախօս՝ ԸՆԿ. ԿՈՐԻՒՆ ՔԷԼԷՇԵԱՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 23 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Շտուրիկ» սրահին մէջ:

●ՁԱԿԷ - ՇԹՈՐԱ

Կազմակերպութեամբ՝ Լեւոնի «ՇԱՍԱՂԱՍՊ» ԿՈՐԻՉԻՆ Բանախօս՝ ԸՆԿ. ՊԱՐՈՅՐ ՏԵՐ ԼՈՒԿԱՍԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 27 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Շալալա»-ի ակումբին մէջ:

●ԺՈՒԹԵՅ

Կազմակերպութեամբ՝ Լեւոնի «ԱՐԱՐԱՍ» ԿՈՐԻՉԻՆ Պիտի գործադրուի յատուկ յայտագիր

Տեղի կ'ունենայ Կիրակի, 27 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 6:00ին, «Թաշնոց Բոյն»-ի սրահին մէջ:

FUEL CARDը գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւր լիցք փոխելու կամ գանոնք լուսլու պարագային:

Երբ մագուլթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

►MANAR - Տորա
►ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Գամուտ
►BASSIL - Տորա, կամուրջի մօտ
►AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»-ի մօտ
►SPEED - Գանքաշ, Կալէրի Իթքիատ
►ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՄԱՆ - «Ալմագա»
►MALLAH - Անթիլիա, կաթողիկոսարանի դիմաց

►MALLAH - Գարեք Ղաուարն
►MALLAH - Պալիմ
►MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
►CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
►SAD - Մար Միայն
►SPEED - Նաիր, «Փոփօ» ընկերութեան մօտ
►PHOENICIA - Այնճարի մուտքին
►MALLAH - Պապապէթ

ԹՈՒՐԻՔԻԱ - ԱԶՐԳԵՅՃԱՆ

ԿԱՆՈՒՄԻ ՏՈՒՐԵՐԵՆՆԵՐ ԽՈՒՍԱՓՈՒՆԵՐ ԸԱՍԱՐ

ՆԻՒ ԵՆՐԵՔ ԴԱՏ ԿԸ ԲԱՆԱՅ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԴԷՄ

Ամերիկեան ուժերուն չարտօնելով, որ իր հողերը կտրելով յարձակում գործեն Իրաքի վրայ, ինչ որ ընդվզեցուցած է Ուաշինգթոնը, Թուրքիա ներկայիս կը զայրացնէ նաեւ Նիւ Եորքը՝ մերժելով վճարել վերջին 20 տարիներուն քաղաքին ունեցած իր կալուածի տուրքերը: Նիւ Եորքի քաղաքապետութեան փաստաբանները 9 Ապրիլին դատ բացին Թուրքիոյ դէմ՝ Մանհատթենի բարձրագոյն Ատենին մէջ, պահանջելով 70 միլիոն տոլար: Նիւ Եորքի պաշտօնատարները ամբաստանեցին Թուրքիան՝ իր դիւանագիտական գրասենեակները, Մանհատթենի «Ետեւայթրոն Նէյլընգ Փլազա» պողոտայի 821րդ փողոցին վրայ գտնուող 11 յարկանի շէնքը, ոչ պաշտօնական առեւտրական նպատակներով գործածելուն համար, այդպիսով խախտելով անոր տուրքէ գերծմնալու կարգավիճակը:

Նիւ Եորքի քաղաքապետ Մայքըլ Պլումպըրկ «Նիւ Եորք Փոսթ» օրաթերթին նշեց, թէ «հակառակ անոր որ մենք հպարտ ենք ՄԱԿը հիւրընկալող քաղաք ըլլալով, մէկ բան ի վիճակի չենք ընելու, այդ ալ մեր հիւրերուն կողմէ շահագործուելն է: Քաղաքին մէջ ներկայութիւն հաստատած օտար երկիրներուն եւ օտար կազմակերպութիւններուն մեծ մասը կը վճարեն իրենցմէ պահանջուած տուրքերը ամենայն ճշդապահութեամբ: Դժբախտաբար, կան նաեւ խումբ մը երկիրներ, որոնք չեն վճարել իրենց տուրքերը»:

Ելքամտական հարցերու խորհրդատու Մարթա Սթրայքնոյն թերթին նշեց, թէ «քաղաքը հարկազօրութիւն կը չնորհէ այն կալուածներուն, որոնք կ'օգտագործուին կառավարական աշխատանքներու համար: Սակայն, երբ կալուածը կ'օգտագործուի առեւտրական նպատակներով եւ կը բնակուի ոչ բարձրատեման անձնակազմի մը կողմէ, անոնց պատկանած երկիրը պէտք է իր արդար կառավարութիւնը բերէ տուրքերուն»:

Առեւտրական ընկերութիւններու խորհրդատու Ռայքը Փափարելլա նաեւ իր տեսակէտը փոխանցեց «Նիւ Եորք Փոսթ»ին, նշելով, որ քաղաքը «փորձեց բարեկամական լուծում մը գտնել» Թուրքիոյ հետ վերջին երկու տարիներուն, բայց ապարդիւն:

Զարեհ Գրիգորեան հետեւեալ պատշաճ դիտողութիւնը ըրած է «Նիւ Եորք Փոսթ»ի 10 Ապրիլի թիւին մէջ լոյս տեսած իր յօդուածին մէջ. «Անոնք միլիտարիզացնող պահանջներն ամերիկեան բանակը իրենց հողին վրայ ընդունելու համար, սակայն թրջական կառավարութիւնը ըստ երեւոյթի հարց չունի ամերիկեան հողը ձրիաբար օգտագործելու», նշեց ան:

Թուրքիոյ ընդհանուր հիւպատոսը «Ճայնէնշըլ Թայմզ»ին ըսած է, թէ իր երկիրը կ'ընդունի իր յետնեալ պարտքերը, սակայն անոնց գումարը շատ աւելի նուազ է քան Նիւ Եորք քաղաքի պատասխանուններուն պահանջած 70 միլիոն տոլարը: Ան նաեւ նշած է, թէ Թուրքիա մտտեցած էր համաձայնութեան մը գոյացման Նիւ Եորքի հետ, բայց այս դատը զարմացուցած էր

ՅԱՐԻՔ ՍԱՍՈՒՆԵԱՆ
Ծար.ը՝ էջ 8

ՄԻԱՅՆ ԳԵՐՄԱՆԻԱ ԸՆԴՆԻՄԱՅԱԾ Է ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԵԱՆ

Վերջերս բացայայտուեցաւ, որ անցեալ տարուան Դեկտեմբերին տեղի ունեցած Եւրոպական Միութեան Բոֆինհայմընի վեհաժողովին ընթացքին միայն Գերմանիա ղեմ կեցած է Թուրքիոյ անդամակցութեան գծով ժամկէտ ճշդելու հարցին:

Արդարեւ, թրջական «Հիւրընկէց» թերթը կը գրէ, թէ Դանիոյ պատերազմի փուլի կայաններէն մէկուն աշխատակից Քրիսթոֆըր Կուլտայնտսեն նկարահանած է վեհաժողովի տեւողութեան ջրլիսներու ետին տեղի ունեցած խօսակցութիւնները: «Հիւրընկէց»-ի համաձայն, այս խօսակցութիւններուն ընթացքին Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչաք Ֆրիշըր իր զրուցակիցին ըսած է. «Բանակցութիւններուն վերաբերեալ Թուրքիոյ կը ճշդենք նախնական ժամկէտ մը եւ յետոյ կը մոռնանք այդ մասին»: Նկարահանուած ժապաւէնէն ի յայտ եկած է նաեւ, որ Դանիոյ արտաքին գործոց նախարար Փեր Սթիք Միւլըր օրին Եւրոպական Միութեան նախագիւղ, Դանիոյ վարչապետ Անտէրս Չոգհ Ռասմուսէնի յայտնած է. «Դանիոյ մէջ եւ ղուրսը գերմանացիներու ըսածները իրարու չեն համապատասխաներ: Արտաքին գործոց նախարար Ֆրիշըր 12 ժամուան մէջ երեք անգամ փոխեց Թուրքիոյ գծով իր կեցուածքը»: Զրոյցին ընթացքին Ռասմուսէն Միւլըր ըսած է, որ հակառակ իր մեծ փափաքին, Թուրքիա կորսնցուցած է 2003ին բանակցութիւններու ժամկէտ ստանալու առիթը: Ան աւելցուցած է, որ իրենք զիրենք Թուրքիոյ բարեկամ ձեռնարկ երկիրներն են, որ վեհաժողովին չեն օգնուելու անոր: Միւլըր իր կարգին դիտել տուած է. «Ֆրիշըր կ'ըսէ, թէ իրենք չեն ուզեր, որ Թուրքիա Եւրոպական Միութեան անդամ դառնայ»:

Յիշեցնենք, որ 12 Դեկտեմբերին տեղի ունեցած վեհաժողովին ընթացքին որոշուած էր Թուրքիոյ անդամակցութեան վերաբերեալ բանակցութիւններու սկսման ժամկէտի ճշդումը յետաձգել մինչեւ 2004 թուական:

Այսուհետեւ «Ազգայն»-ի Չորեքշաբթի օրուան «Միջազգային քաղաքական» էջը պիտի փոխարինուի «Թուրքիա-Ազրպէյճան» էջով, որ պիտի բովանդակէ երկու երկիրներուն մասին այլազան հիւրեր՝ քաղաքական, ընկերային, փոքրատնտեսական, արտաքին յարաբերութիւններ, ուսումնական եւ այլն: Թուրքիան եւ Ազրպէյճանը, անոնց անչլուող փորձեր բնոյթի հարցերը միշտ ալ կարեւոր տեղ գրասած են «Ազգայն»-ի ստորեւայ լրատուութեան, «Հայ Գար»-ի թէ «Միջազգային քաղաքական կենտրոն»-ի էջերուն ընդմէջէն: Այսուհանդերձ, Թուրքիոյ եւ Ազրպէյճանի մասին յարուկ լրացուցիչ էջի մը հաստատումը կը նպաստակարգէր հեղինակներուն ներկայացնել անոնց վերաբերող հիւրեր, մեկնելով բնագիտական լայն հարկաւորութիւններէն:

ԱԶՐԳԵՅՃԱՆ՝ ԴԱՇՆԱԿԻՅՆԵՐՈՒ ՓՆՏՈՏՈՒՔԻ ՄԷՋ

Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիեւ վերջերս այցելեց Ռուսիան, ուր բանակցութիւններ ունեցաւ երկրի ղեկավարութեան հետ, հիմնականօրէն արծարծելով Պուլքէշի հետ Պաքուի զինուորական յարաբերութիւնները: Իր ուղեւորութեան պաշտօնակից իր Միւլըք Փաշթուրի հետ հանդիպման ընթացքին ազրպէյճանցի պաշտօնատարը դիտել տուած է, թէ բազմաթիւ բնագաւառներու մէջ երկրորդային յարաբերութիւնները մեծ թափով զարգացում կ'արձանագրեն: Նախարարները մտքեր փոխանակած են զինուորական ուժերու, ռազմարհիւստական համագործակցութեան, զինուորական ուժերու հետեւող աշակերտներու փոխանակման վերաբերող հարցերու, ինչպէս նաեւ ՕԹԱՆԻ «Գործընկերութիւն» Ցանուն խաղաղութեան ծրագրին ներս համագործակցութեան, Պալքաններու, Հարաւային Կովկասի, Հայ-ազրպէյճանական տագնապի զինուորական քաղաքական գործընթացներու ծիրէն ներս գործակցութեան մասին:



Սաֆար Ապիեւ

Էի Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան հիմնական վրայ: Ռուսիայի մէջ Սաֆար Ապիեւ նաեւ այցելեց Ռուսիայի Չինուորական Բարձրագոյն Վարժարան, Մոսկովի Ակադեմիա, եւ Ռազմական Արհեստագիտութեան Ուսուցման Գործակալութիւն:

ԱԶՐԳԵՅՃԱՆ-ՅՈՒՆԱՍԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ԲԱՐԵՆՈՒՄ

Ազրպէյճանի «Էյ. Էն. Էս.» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, թէ վերջերս տեղի ունեցած է Ազրպէյճանի եւ Յունաստանի միջկապական յանձնաժողովի հանդիպում, որուն ընթացքին Յունաստանի արտաքին գործոց փոխնախարար Լովերտոս Կարեւոր նկատած է Յունաստանի մէջ ազրպէյճանական դիւանագիտական ներկայութիւն հաստատել: Հանդիպումին ընթացքին յանձնաժողովին մօտ յունական պատուիրակութեան ներկայացուցիչը դիտել տուած է, որ երկու պետութիւններուն միջեւ առեւտրի տարրերը զիջելու բաւարար չէ: Ըստ «Էյ. Էն. Էս.»-ի ան առաջարկած է առեւտրական կապեր հաստատել ղեկորայքի, գեղեցկագիւղ-

տական արտադրութիւններու, փոխադրամիջոցներու եւ այլ մարզերու մէջ:

Միւս կողմէ, Ազրպէյճանի պետական երկաթուղագիծի բաժնեմուծի փոխ տնօրէն Մուսա Փանահով յայտնած է, թէ կարելի է Ազրպէյճանը ուղղակիօրէն Եւրոպայի կապող երկաթուղի մը հաստատել, եթէ յոյն գործընթացները այս գծով ներդրումներ կատարեն: Ազրպէյճանական կողմը նաեւ պատրաստակամութիւն յայտնած է Յունաստանի ճամբով Եւրոպա բնական կապ արտածելու:

ԱԶԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԳԻՆԱՍԵՐ ԿԸ ՆԿԱՏԷ ԻՐԱՆ ԻՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Ազրպէյճանի ներքին գործոց նախարար Ռամիլ Ուսուկով վերջերս աւարտեց իրան կատարած իր այցելութիւնը, գորարդիւնաբեր նկատեց: Այցելութեան մասին խօսելով ան յայտնեց, թէ երկու կողմերը քննարկած են ահաբեկչութեան, ապօրինի արտագաղթի, կանխամտադու ճորագործութիւններու վերաբերող հարցեր եւ այլ խնդիրներ: Ուսուկովի համաձայն, իրանի արդարադատութեան նախարարին հետ հանդիպումի մը ընթացքին, երկու կողմերը բանարկեաներու փոխանակման գծով համաձայնագիր մը կնքած են: Ազրպէյճանի նախարարը ըսաւ, որ Ազրպէյճանի մէջ բանտարկութեան վճիռ ստանալով 89 իրանցի քաղաքացիներ յանձնուած են իրանի եւ փոխարէնը իրանի մէջ ազրպէյճանական բանտարկեալներ յանձնուած են Ազրպէյճանի:

Ըստ կնքուած համաձայնութեան, իրանի եւ Ազրպէյճանի սահմանային ուժերը այսուհանդերձ պիտի գործակցին իրարու հետ:

Ուսուկով նաեւ յայտնեց, թէ այցելութեան ընթացքին որոշուած է հաստատել միջկապական յանձնաժողով մը, որուն մաս կիտր կազմեն իրանի եւ Ազրպէյճանի ներքին գործոց փոխնախարարները: Ցանձնաժողովի անդամները հանդիպումներ պիտի ունենան իրաքացնչիւր վեց ամիսը անգամ մը՝ Պաքուի կամ Թեհրանի մէջ:

Ուսուկով աւելցուց, որ իրանցի պաշտօնատարներ միշտ յայտնած են, թէ նեցուկ կը կանգնին Ազրպէյճանի հողային ամբողջականութեան:

ԱԶՐԳԵՅՃԱՆԻ ԸՆԴՆԻՄԱՅԻՐ ԿՈՒՍԱԿԵՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՈՆԱԿԱԿԱԿ ԿԸ ԿՈՉԵՆ ԱԼԻԵԸ

Ապրիլ 13ին Ազրպէյճանի ընդդիմադիր կուսակցութիւնները Պաքուի մէջ կապակերպած են բողոքի քայլարշաւ մը, որուն ընթացքին պահանջած են նախագահ Հայտար Ալիեւի հրաժարումը եւ պայն կոչած՝ բռնակալ: Անոնք յայտնած են, թէ Ալիեւի կամայական քաղաքականութիւնը հեռու է Ազրպէյճանի ժողովուրդին տնտեսական եւ քաղաքական իրաւունքները ապահովելէ:

Պաքուի գլխաւոր հրապարակին մէջ ցուցի ընթացքին Ազրպէյճանի ժողովուրդավարական կուսակցութեան բանբեր Քուրբան Մահմատով անդրադառնալով իրաքի վերջին իրադարձութիւններուն, յայտնած է, թէ Ազրպէյճանի մէջ իշխանութեան փոփոխութիւնը բռնի ուժով չէ, որ պիտի իրագործուի, այլ՝ ժողովուրդի միութեամբ: Քաղաքացիական Միութիւն կուսակցութեան նախագահ Սապիր Հաճիեւ իր կարգին կոչուողած է քայլարշաւի մասնակիցներուն, որ ժողովուրդավարական սկզբունքներու հիման վրայ ընտրութիւններ կատարեն՝ շեշտելով, որ ժողովուրդը պէտք է վստահի իր սեփական ուժերուն եւ ոչ՝ միջազգային կազմակերպութիւններու: Իսկ Մուսաւաթ կուսակցութեան նախագահ Իսա Քամպար դիտել տուած է, որ ներկայ իշխանութիւններու պատճառով Լեռնային Ղարաբաղը կը մնայ «բռնագրաւուած» եւ Ազրպէյճանի ժողովուրդը տնտեսական ծանր պայմաններու տակ կ'ապրի:

ՄՔԱՆՏԱԼ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Վերջերս յայտնի դարձաւ, որ միջազգային ահաբեկչութեան վերաբերող համաձայնագրի նախագիծ մը, որ ահաբեկչական կը նկատուի թրջական «Ազգային Գաղափարախօսութիւն» կազմակերպութիւնը, ստորագրուած է Թուրքիոյ վարչապետին եւ որոշ նախարարներու կողմէ, որոնք գայն ստորագրած են «առանց կարողութեան»: Նշեալ նախագիծը արդէն իսկ չփոխ մատնած էր Թուրքիոյ իշխող Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութիւնը, տրուած ըլլալով, որ ան կր սերի «Ազգային Գաղափարախօսութիւն» կազմակերպութիւնը:

Թրջական «Հիւրընկէց» թերթին համաձայն, Թուրքիոյ եւ Գերմանիոյ միջեւ ահաբեկչութեան ղեմ պայքարի համաձայնագրի 7 էջէ բաղկացած նախագիծը, որ նաեւ շատ մը կազմակերպութիւններու կողմէ ահաբեկչական կ'որակէ թրջական «Ազգային Գաղափարախօսութիւն» կազմակերպութիւնը, ստորագրած են վարչապետ Ռայիի Էրտողըն եւ նախարարաց խորհուրդի որոշ անդամներ: Խնդիրը այն է, որ Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութեան անդամներու նկատուող կազմակերպութեան եւ հետեւեալը, ստորագրելով այդ փաստաթուղթը, թրջական կառավարութիւնը «կը խոստովանի», թէ գրեթէ ամբողջ կազմով ահաբեկչական է: «Հիւրընկէց»-ի համաձայն, կառավարութեան անդամները համաձայնագրի նախագիծը ստորագրած են «մեքենայաբար, առանց կարողութեան, եւ ստորագրումէն ետք յղած են խորհրդարանին, վաւերացման համար: Խորհրդարանի նախագահ Պիլիքէ Արիք յայտնած է, թէ Արդարութեան եւ Բարգաւաճում կուսակցութիւնը իբրեւ «ահաբեկչի» ճանչցող համաձայնագրի տակ ստորագրած են, վարչապետին կողմէ, Ազգային Գաղափարախօսութիւն կազմակերպութեան սերտ փոխ վարչապետներ Ապուլլա Կիւլ, Ապուլլա Միլլի Եւ Մեհմետ Ալի Շահին, տնտեսական զարգացման նախարար Չեքի Էրգեքէն եւ բնապահպանութեան նախարար Օսման Փեքէն: Իր կարգին, կառավարութեան բանբեր եւ արդարադատութեան նախարար Ճամիլ Չիլէք յայտարարած է. «Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութիւնը ամբողջութեամբ Ազգային Գաղափարախօսութիւն կազմակերպութիւնը չի ներկայացներ, պարզապէս կան այդ կազմակերպութեան մաս կազմած նախկին որոշ անդամներ: Հասկընալի է, որ միջազգային համաձայնագիրը մենք չենք կրնալ փոխել: Սակայն խորհրդարանը կրնայ հանդէս գալ ահաբեկչական կազմակերպութիւններու բաժինին մէջ փոփոխութիւն մտցնելու եւ համաձայնագրի վաւերացումը առայժմ յետաձգելու առաջարկով»:

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԸ ԶԵՐԲԱԿԱԿԱԿՈՒԻ ԱԶԵՐԻ ԱՀԱԲԵԿԻՉ ՄԸ

Զինաստանի իշխանութիւնները վերջերս հաղորդեցին, որ ձերբակալուած են ագրի ահաբեկիչ մը: Ագրի քաղաքացի, որուն անունը տակաւին չէ հրապարակուած, ձերբակալութեան պահուել կը կրէ Նաուրուի (Խաղաղական ուժի կազմում) մէջ պետութիւն մը:

Քաղաքացիի անցագիր: Զինաստանի իշխանութիւնները կ'ենթադրեն, որ ան այդ անցագիրը ձերբակալուած է ապօրինի միջոցներով: Ցարդ ահաբեկիչի գործողութիւններու մասին միայն ճշտուած է ամերիկական քաղաքացիի մը սպանութիւնը:

ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Միջազգային պատմություն, իրրեւ քաղաքակրթության եւ հզոր կայսրություններու օրրան անդրադարձած ենք նախորդ յօդուածներով, հասնելով անոր արարացման, իսլամացման եւ Օմայյաններու խալիֆայության հանդերձանները: Այժմ կը ներկայացնենք Արասեան խալիֆայությանն մինչեւ օսմանեան տիրապետության ժամանակաշրջանը:

ԱՐԱՍԵԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՔԻ ՈՍԿԵՂԱՐԸ

Օմայյաններու խալիֆայությանն ղեկավարող արքայազնի Արասեանները Մուհամմէտ մարգարէի Արաս հորեղբոր սերունդն էին եւ Հաշէմական տան ժառանգորդներէն կը նկատուէին: Թէեւ սիւննիներ, բայց անոնք մեծ հեղինակութիւն ձեռք բերեցին շիւննիներու եւ յատկապէս պարսիկներու մօտ: Արասեան տան հովանաւոր, ծագումով պարսիկ Ապու Մուսլիմ 747ին Իրանի հիւսիս - արեւելեան Նորասան երկրամասը իր հակակշիռին տակ առաւ: Արեւելքէն յառաջանալով՝ անոր բանակը 749ին Միջազգային ճակատագրի տակ առաւ եւ 750ին, Մեծ Ջաբ գետի ափերուն մոտեւ ճակատամարտին Արասեաններու բանակը հիմնովին ջախջախեց Օմայյան Մարուան Բ. խալիֆային բանակը:

Նուաճելով Օմայյանները՝ Արասեան տան ներկայացուցիչ Ապու Արաս Սաֆֆահ խալիֆան հռչակուեցաւ Քուշայի մզկիթին մէջ: Արաս-

ԻՐԱՔ՝ ԱՐԱՍԵԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ՄԻՆՉԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՍԵՆՃՈՒՔՆԵՐ ԻՐԱՔԻ ՄԵՉ

Սեյճուք թուրքերը, Տուրքիլ բէկի առաջնորդութեամբ 1055 Դեկտեմբերին հասան Իրաքի սահմանները, որմէ ետք թրքական ցեղախումբեր մտան Իրաք եւ զինուորական տիրական ուժ դարձան խալիֆայության մէջ:

ԺԱ. դարու կէսէն ետք եւ յատկապէս ԺԲ. դարուն սեյճուք թուրքերը (որոնք սիւննիներ էին) գրեթէ ամբողջ Իրաքի վրայ ուղղակի կամ անուղիղ հակակշիռ հաստատեցին, իսկ Վերին Իրաք սեյճուք էմիրներու եւ կառավարիչներու ամբողջական իշխանութեան տակ անցաւ: Անոնցմէ իմաստէ տոտի Չանկի հիմնեց Չանկիներու հարստութիւնը: Չանկիներու մէջ ճիւղը Մուսուլի վրայ իշխեց 1127էն 1222:

ՄՈՆԿՈՒԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. ՊԱՂՏԱՍԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Մոնկոլներ, Հուլաղու խանի առաջնորդութեամբ ներխուժեցին Իրաք եւ 10 Փետրուար 1258ին նուաճեցին Պաղտատը ու հիմնադրեցին կործանեցին արարական փառքի, մշակութի, գիտութեան, արուեստներու, «հազար ու մէկ գիշերներ» ու այս երազային ոստանը, իսկ անոր 800 հազար բնակիչները գանգուածաբար բնաջնջեցին: Արասեան հարստութեան վերջին գահակալը՝ Մուսթասիմ խալիֆա եւ Արասեան տան անդամները սպանուեցան, որմէ ետք խալիֆայութիւնը անցաւ Եգիպտոսի մեմլուքներուն: Հետագային, 1517ին երբ օսմանցիք գրաւեցին Եգիպտոսը, օսմանեան սուլթաններ ձեռք բերեցին խալիֆայութիւնը, մինչեւ որ անիկա 1924ին ջնջուեցաւ Մուսթաֆա Քեմալի կողմէ:

Տիրանալով Իրաքի, մոնկոլ իլխաններ սկսան կառավարել երկիրը: Վերջին իլխան Ապու Սալիմ Պահաուդին իսլամի մահէն ետք, 1335ին, մոնկոլ պետերու միջեւ պայքար ծայր առաւ իշխանութեան տիրանալու համար: Արիւնահեղ կռիւներ ծայր առին յատկապէս Ատրպատականի մէջ կերտուեցան Սուլթուգ (կամ Չոպանի) եւ Պաղտատի շրջանը կերտուեցան Չալալի ցեղախումբերուն միջեւ, մինչեւ որ Չալալիներու ցեղապետ շէյխ Ուէյս 1356ին նուաճեց Սուլթուգները եւ ձեռնարկեց Պաղտատի վերակառուցման:

Սուլթան Ահմատ Չալալիի իշխանութեան

Հայաստանի, Ատրպատականի եւ Իրանի վրայ եւ 1468ին նուաճեց Իրաքը: Ազ Գոյունլուններուն իշխանութիւնը տեւեց մինչեւ 1508:

ՊԱՐՍԻԿ ՍԱՖԱՈՒՆԵՐՈՒ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Սաֆաուիներու տոհմը, որ շիր վեցերորդ իմամ Մուսա Քազիմի սերունդէն կը նկատուէր, կրօնական ու քաղաքական ղեկավար դերակատարութիւն ունէր Իրանի մէջ: Անոնց առաջնորդ շահ Իսմայիլ 21 Հոկտեմբեր 1508ին ձեռք բերեց Իրանի գահը եւ հիմնեց Սաֆաուիներու հարստութիւնը, որմէ ետք զգրկւած թուրքմէններու ուժով մտաւ Պաղտատ եւ վերջ տուաւ Ազ Գոյունլուններու իշխանութեան:

Օսմանցիներու եւ Սաֆաուիներու միջեւ մղուած 1514ի Չրտրարանի ճակատամարտէն ետք Վերին Միջազգային, Մուսուլի եւ քրտարնակ շրջանները անցան օսմանեան գերիշխանութեան տակ, բայց արարական Միջազգային մնաց Պարսկաստանի: Մուսուլու տոհմին պետերը, որոնք նախապէս Ազ Գոյունլու ցեղային գահակալութեան պետերն էին, Սաֆաուիներու ծառայութեան մէջ մտան եւ Պաղտատի վրայ հակակշիռ հաստատեցին: Նշենք, որ Մուսուլուները հետագային Իրան մտան եւ թրքական Քաշգերի ցեղախումբերուն միացան: Անոնց սերունդները մինչեւ հիմա պահած են իրենց թափառաշրջրէլի ապրելակերպը Ֆարս նահանգին մէջ:

ՕՍՄԱՆԵԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՏՔ

Օսմանեան սուլթան Սիւլէյման Ա. 1533ին պատերազմի ձեռնարկեց Իրանի դէմ եւ 18 Նոյեմբեր 1534ին գրաւեց Պաղտատը Սաֆաուիներէն: Երկու օր Իրաք մնաց օսմանեան գերիշխանութեան տակ:

Օսմանցիք Իրաքը քանի մը նահանգներու բաժնեցին: Մուսուլ, Պաղտատ, Պասրա եւ Շահ-Րիզուր, իսկ Արաքիոյ հիւսիս-արեւելեան Հասանահանգին մէջ մտաւ կը ընդգրկէր հարաւային Իրաքը: Մուսուլի եւ Շահ-Րիզուրի (Տիգրիսէն արեւելք) բնակչութեան մեծամասնութիւնը քրիստոնէն էին: Գաշտային շրջաններուն, ճահճներուն եւ անապատներուն բնակիչները՝ արարական ծայրագոյն արաբախօս կերտուները: Թուրքմէն ցեղախումբերու կերտուեցան էին Քերքուքի, Արպիլի եւ Մուսուլ նահանգի մէջ Աֆարի շրջանին մէջ: Քրիստոնէայ բնակչութիւնը մեծ մասամբ լեռնային շրջաններու մէջ առանձնացած ինքնամփոփ կեանք կ'ապրէր: Իսկ հրեաները առեւտրական եւ տնտեսական կարելոր ուժ կը ներկայացնէին Պաղտատի եւ լիւսաւոր քաղաքներուն մէջ:

Դարաւոր ներխուժումներն ու պատերազմները արդէն մեծապէս նուազեցուցած էին Իրաքի բնակչութիւնը: Քաղաքները անչքացած էին եւ թէ՛ արարթէ քրիստոնէական մօտաւորապէս կէսը թափառաշրջիկներ եւ կիսաքրիստոնէներ էին: Քաղաքներէն դուրս պետութիւնը գրեթէ հակակշիռ չունէր եւ ցեղախումբերն էին իշխող ուժը: Պաղտատ, երկրին աշխարհագրական կեդրոնը, հարաւի շիրներուն եւ հիւսիսի սիւննիներուն միջեւ սահմանագիծ կը նկատուէր:

Իրաք օսմանեան սիւննի սուլթաններուն եւ Իրանի շիր շահերուն մրցադաշտին վերածուեցաւ: Շահ Արաս Ա. 1623ին գրաւեց Պաղտատը եւ Իրաք կրկին Սաֆաուիներու տիրապետութեան տակ անցաւ, մինչեւ որ սուլթան Մուրատ Գ. 1638ին վերագրաւեց գաշին:

Գասրի Շիրիի դաշինքը 1639ին վերջ գրաւ օսմանցիներու եւ Պարսկաստանի միջեւ 150 տարուան պատերազմներուն եւ հաստատուեցան երկու երկիրներուն սահմանները, որոնք պահպանուած են մինչեւ հիմա:

Ցեղախումբերու միջեւ տեւական կռիւները, անիշխանութիւնը, նստակեաց բնակավայրերու վրայ թափառաշրջիկներու ամէնօրեայ յարձակումները քառուս մասնած էին Իրաքը: սիւննիները կը նկատուէին գերիշխող ուժ, իսկ շիրները հայտնուած ու անտեսուած գոյակիճակ ունէին:

Պանու իսլայտ ցեղախումբին պետերը, որոնք ժառանգաբար Հասանի կառավարիչներն էին, իրրեւ բնակավայր հիմնեցին Քուշայի, որ յարախառն ցեղով եւ գմբէթաման տանիքներով բնակարաններէ եւ փոքր ամրոցէ մը բաղկացած էր, եւ իրենց իշխանութիւնը տարածեցին Իրաքի վրայ: Պանու թամիլները, տարածուած՝ Արաքիոյ կեդրոնական գօտիէն մինչեւ Իրաքի քրտարնակ գօտին, նոյնպէս մեծ հեղինակութիւն ձեռք բերեցին, յատկապէս՝ Մուհէյն շէյխութիւնը Քաղաքի մէջ իշխանութիւն հաստատեց: Թայ ցեղախումբերը, տարածուած՝ Վերին Չեզիլէն, Եփրատի ափերէն, Չարապլուսի կողմէ-



Եփրատ գետը

րէն մինչեւ Սինճարի լեռները, Մուսուլի շրջանը եւ Պաղտատ, եւ ճպուր ցեղախումբը, տարածուած՝ Նապուրի ափերէն, Հասաթէն մինչեւ կերտուական Իրաք, անհամեմատօրէն զօրացան եւ այնուհետեւ կիսանկախ իշխանութիւններ հաստատեցին: Քրտարնակ շրջաններուն մէջ ամէնէն աւելի զօրաւոր էին Սորանի, Բարանի եւ Պահաուի իշխանութիւնները:


Պաղտատի եւ շրջակայքի եւ Սամարայի մէջ ամէնէն հեղինակաւոր ցեղախումբերն էին՝ Սալթահ, Օպէյտ, Ազգա, Նազրաւ, Ազպու Հայագէհ եւ Սաուաճիւր, անոնցմէ Մուսուլիները, որոնք Մուհամմէտ մարգարէն սերած են եւ վեց տոհմերու բաժնուած են (Ալպու Այաս, Ալպու Պատրի, Ալպու Նիսան, Ալպու Ապպաս, Ալպու Տարրաւ եւ Ալպու Պագ), Սամարայի եւ Թիքրիթի իշխող ուժը դարձան:

Քարապալայի եւ Նաճաֆի շրջաններուն մէջ շիր Մասուուտ ցեղախումբը, իր գլխաւոր երեք ճիւղերով՝ Ղուրէյր, Հուրէյր եւ Քաուաւ, ինչպէս նաեւ Ջազարիթ, Պանու Ասատ եւ Ուազգուլ ցեղախումբերը ամէնէն զօրաւորներն էին: Պասրայի շրջանին մէջ Ռապիւ, Շարաշ, Մուսուլու, Իտան, Սալաբի, Շուրէյֆաթ, Պէյթ Քանան եւ Պէյթ Ղանէմ, իսկ Հալալի շրջանին մէջ՝ Ալպու Սուլթան, Չահիշ եւ Չալալ ցեղախումբերը անհակակշիռ ուժ էին: Սաստուն ընտանիքը, որ Մուհամմէտ մարգարէն սերած է, հարաւի ոչխարաբոյծ թափառաշրջիկ եւ մաստան (ճահճներու բնակիչ) շիր Պանու Մալէք, Պանու Սալիւ, Աճուատ եւ այլ ցեղախումբեր միաւորելով կազմեց Մուսուլի ցեղային միութիւնը: Ամարայի շրջանին մէջ կազմեցին Կազիլի ուժերը դարձան Ալպու Մուհամմէտ ցեղախումբը՝ գլխաւորութեամբ խալիֆա շէյխերու ընտանիքին, եւ Պանու Լամ ու Ազիւր ցեղախումբերը:

Քարապալայի Դուր ծագումով վրացի Հասան փաշան 1704ին Պաղտատի կառավարիչ դրկեց՝ ան եւ զաւակը՝ Ահմատ փաշա մեմլուքներէ բաղկացած վարչակազմ հաստատեցին: մեմլուքները ծագումով քրիստոնէայ իսլամացած ստրուկներ իր գերիներն էին, որոնք զինուորական կրթութիւն ստանալէ ետք պատասխանատու դիրքերու կը տիրանային: Իրաք հաստատուած մեմլուքները, որոնք երկու հազար կրտողներէ բաղկացած էին, իրենց ազդեցութիւնը տարածեցին Պաղտատէն մինչեւ Մարտին, Ուրֆա եւ քրտական Շահ-Րիզուր, հակակշիռ հաստատելով հիւսիսի առեւտրական ուղիներուն վրայ: Անոնք նաեւ Պասրային Արաքի եւ Հնդկաստան առեւտրական ուղիներ հաստատեցին: Այս ժամանակներէն սկսեալ ծագումով վրացի մեմլուքներու ինքնավար վարչակազմը ամբողջական հակակշիռ հաստատեց Իրաքի վրայ: վերջին կառավարիչը եղաւ Տաւուտ փաշա (1816-1831), որմէ ետք վերջ գտաւ մեմլուք վարչակազմը:

Օսմանցիք այնուհետեւ նոր վարչակազմ հաստատեցին Պաղտատի մէջ եւ ձեռնարկեցին քրտական ինքնիշխան իշխանութիւնները նուաճելու աշխատանքին, եւ մինչեւ 1850ական տարիները մէկը միւսին տեւեւ ինկան քրտական ցեղային իշխանութիւնները:

Այնուհետեւ, ԺԹ. դարու կէսէն ետք արարներ եւ քրտներ մտան օսմանեան բանակէն ներս եւ անոնցմէ շատեր սպայի աստիճան ստացան: սիւննի երեւելի ընտանիքներու զաւակներ Պաղտատի եւ այլ քաղաքներու զինուորական վարժարանները մտան, ոմանք Պոլիս ուսանելու գացին եւ յայպէտով զինուորական ու պետական բարձր դիրքերու տիրացան: այլ սերունդի վերջին ներկայացուցիչներէն էին Նուրի Սալիւ եւ Եսաիւ Հաշէմի, որոնք հետագային, Իրաքի անկախութեանն ետք ղեկավար դէմքեր դարձան:



Պաղտատ

եաններ սկիզբը Քուշան մարգարէի հռչակեցին, բայց Մանսուր խալիֆա 762ին Տիգրիսի ափին հիմնեց Պաղտատը, որ մայրաքաղաք դարձաւ: Պաղտատ արագօրէն բարգաւաճեցաւ եւ իր մօտաւորապէս կէս միլիոն բնակչութեամբ մշակութի, գիտութեան եւ առեւտրի կեդրոն դարձաւ:

Այս ժամանակներէն սկսաւ գործածուել Իրաք անունը՝ աշխարհագրական երկու երկրամասերու համար: Իրաք Արապի՝ Միջազգային համար եւ Իրաք Աճամի՝ Ջազարեան լեռներէն արեւելք տարածուող երկրամասերուն համար: Իրաք Արապի իր կարգին երկու գօտիներու բաժնուեցաւ: Վերին Իրաք կամ Ճեզիրէ (կղզի) եւ Վարին Իրաք կամ Աս - Սաուատ (սեւ հողեր):

Արասեան խալիֆայութիւնը իր գօրութեան ու փառքի գագաթնակէտին հասաւ Հարուն Ռաշիտ խալիֆային օրով (786 - 809): Մուսթասիմ խալիֆա (833 - 847) Պաղտատէն հիւսիս, Տիգրիսի ափին հիմնեց Սամարրան եւ գաշին իր մայրաքաղաքին վերածեց: Հոն կառուցուեցան պայատներ, մզկիթներ ու հոյակերտ ապարաններ: Սամարրա մեծ քաղաք դարձաւ եւ մինչեւ 892 մնաց խալիֆայութեան մայրաքաղաքը, երբ գահը կրկին Պաղտատ փոխադրուեցաւ:

Այս ժամանակներէն սկսեալ թուրք վարձկան զինուորներ ներմուծուեցան բանակէն ներս: միաժամանակ սկսաւ անիշխանութեան շրջան մը, երբ Պաղտատ եւ Սամարրա մրցակից քաղաքներու վերածուեցան:

Կասպից ծովու հարաւ - արեւմտեան ափերուն բնակող Տալլամի ցեղախումբերու պետ Մուհի Տաուլա 945ին իշխանութիւն հաստատեց Պաղտատի մէջ: Տալլամիներ եւ թուրքեր խալիֆայութեան զինուորական զլխաւոր ուժը կազմեցին: Պաղտատի մէջ շիր եւ սիւննի համայնքները իրենց առանձին թաղամասերը ունէին, որոնցմէ իւրաքանչիւրը պատերով բաժնուած էին իրարմէ: Միաժամանակ երեւան ելան իշխող տոհմեր ու ցեղեր: Արաբական թաղիկ եւ Պանու Ուզէյլ ցեղախումբերը ամէնէն հեղինակաւորները դարձան: Ջօրացան նաեւ թուրք ցեղախումբերը, որոնք 1044ին մեծ պատերազմի մը բռնուեցան արարներուն հետ եւ պարտուեցան: Այս ճակատամարտը, որ յարաբերաբար քիչ ուղղորութեան արժանացած է պատմութեան մէջ, ճակատագրական նշանակութիւն ունեցաւ եւ պատճառ դարձաւ, որ Իրաք մնայ արարական ու կանգ առնէ թրքական ցեղերու հոսքը:



Սամարրա

ժամանակ Լենկթիմուր 1393ին գրաւեց Պաղտատը եւ Թիքրիթը: Սուլթան Ահմատ վերագրաւեց Պաղտատը, բայց Լենկթիմուր 1401ին կրկին նուաճեց գաշին: Լենկթիմուրի մահէն ետք սուլթան Ահմատ վերագրաւեց Պաղտատը:

ԳՎՐԱ ԳՈՅՈՒՆԼՈՒՅԵՐ ԱՎ ԳՈՅՈՒՆԼՈՒՅԵՐ ԱՎ ԳՈՅՈՒՆԼՈՒՅԵՐ

Ջայկական բարձրաւանդակ մտած թուրքմէն թափառաշրջիկ Գարա Գոյունլու (սեւ ոչխարաւոր) ցեղախումբերու պետ Գարա Եուսուֆ 1410ին սպաննեց սուլթան Ահմատ Չալալիին եւ իր իշխանութիւնը տարածեց իր գրուեմէն մինչեւ հարաւային Միջազգային:

Գարա Գոյունլուներուն մրցակից թուրքմէն Ազ Գոյունլու (ճերմակ ոչխարաւոր) ցեղախումբերու պետ Ուզուլ Հասան, որուն իշխանութիւնը կը տարածուէր Տիքրպէրէրէն Սերաստիւ, 1467ին իր տիրապետութիւնը տարածեց

ՆԻՒ ԵՈՐՔ ԴԱՏ...

Շարունակուած՝ 6րդ էջէն

գիրենք: «Մենք գումարի մը շուրջ համաձայնած էինք քաղաքին հետ եւ կը կարծէինք, որ միայն վճարուածն էր ժամանակը մնաց որոշելիք», նշեց ան:

Թուրքիոյ կառավարութեան փաստաբանը «Նիւ Եորք Տէյլի Նիւզ»-ին ըսաւ, թէ քաղաքը եւ «Իր յաճախորդը» վերջնական ձեւի մէջ դրած էին համաձայնութիւնը, երբ դատի կանչուեցան:

Քաղաքին փաստաբանը իր կարգին «Նիւ Եորք Տէյլի Նիւզ»-ին դիտել տուաւ, որ երկու կողմերը համաձայնութեան մը յանգած էին անցեալ տարի, բայց Թուրքիա չէր վճարած: «Մենք չէինք կրնար աւելի սպասել, հետեւաբար դատի հրահրեցինք գիրենք», նշեց ան:

Կը թուի, թէ Ուաշինկթըն եւ Նիւ Եորք ալ չեն հանդուրժեր Թուրքիոյ անպարկեշտութիւնը: Ծերակուտական Ջաք Շամըր (Ժողովրդավարական - դեմոկրատական - Նիւ Եորքէն) գիտէ ինչպէս պէտք է վարուիլ Թուրքիոյ նման խաբեբայ երկիրներուն հետ: Ան առաջարկեց կասեցնել արտաքին օժանդակութիւնները այն երկիրներուն, որոնք կալուածի տուրք չեն վճարեր Նիւ Եորքին:

Ծերակուտական Շամըր նամակ գրեց արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըին՝ տեղեկացնելու համար, որ մտադիր է կարգ մը պայմաններ աւելցնելու արտաքին օժանդակութեան ապագայ օրինակներուն մէջ, նպատակ ունենալով Նիւ Եորքին պարտք ունեցող երկիրներէն հաւաքել այդ վճարուած տուրքերը:

10 Ապրիլին հրապարակուած մամուլ տեղեկագիրի մը մէջ Նիւ Եորքի աւագ ծերակուտականը կը գրէ, թէ «Երկար ժամանակէ ի վեր իրանագէտներ խախտած են այս քաղաքի օրէնքները եւ պատասխանատուութեան չեն հրաւիրուած... մենք պարզապէս ալ չենք կրնար արտօնել, որ այդ երկիրները ծաղրեն մեզ եւ մերժեն տուրք վճարել Նիւ Եորքի մէջ իրենց սեփական շէնքերուն համար... Մենք պէտք է այդ պարտքերը գանձենք մեր կողմէ իրենց ուղարկուած օժանդակութիւններուն հաշուով»:

Եթէ Գոնկընը վաւերացնէ ծերակուտական Շամըրին առաջարկը, ապա 70 միլիոն տոլար պիտի գեղջուկ անցնել չաբաթ նախագահ Պուշին կողմէ Թուրքիոյ անարժանաբար խոստացուած մէկ միլիոն տոլար ուղղակի օժանդակութեան:

Դժբախտաբար, նոյնիսկ եթէ Թուրքերը վճարեն իրենց յետեւալ պարտքերը, անոնք պիտի չելին թրքական կառավարութեան գանձարկիցէն, այլ՝ ամերիկացի ժողովուրդին վճարած տուրքերէն, որոնցմէ մէկ միլիոն տոլար տրամադրուած էր Թուրքիոյ վերջերս, Պուշին վարչակազմին կողմէ: Առաւել, ամերիկացի տուրք վճարողները անուղղակիօրէն (արտաքին օժանդակութեան ճամբով) վճարած կ'ըլլան Թուրքիոյ կառավարութիւնը պաշտպանող փաստաբաններուն, ինչպէս նաեւ հանրային յարաբերութեան հաստատութիւններուն (որոնց ծախսը տարեկան երկու միլիոն տոլար է), Ուաշինկթընի մէջ Թուրքիոյ ի նպաստ լրագրողական խառնուրդ տանելու համար:

«Քալիֆորնիա Քուրիք»-ի խմբագիր

ՍԱԿԱՐԱՆ

| | |
|---|------------------------|
| Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագիները հետեւեալներն էին երկ. | 32,30 - 32,40 լ.ն. |
| Սուրիական թղթուկի | 4855,00 - 4865,00 լ.ն. |
| Իրաքեան տինար | 5020,00 - 5045,00 լ.ն. |
| Քուէթեան տինար | 2121,00 - 2131,00 լ.ն. |
| Յորդանանեան տինար | 3985,00 - 4010,00 լ.ն. |
| Պահրէյնեան տինար | 410,75 - 412,75 լ.ն. |
| Մ.Մ. Էմիրութեան տիրիալ | 413,75 - 415,75 լ.ն. |
| Քարթաբեան դիալ | 402,00 - 404,00 լ.ն. |
| Սէուտական դիալ | 3895,00 - 3920,00 լ.ն. |
| Օմանեան դիալ | 250,00 - 260,00 լ.ն. |
| Եգիպտական կինէ | 2375,00 - 2385,00 լ.ն. |
| Անգլիական սթըրլին | 1097,00 - 1102,00 լ.ն. |
| Չուիցեթիական ֆրանք | 93,75 - 94,00 լ.ն. |
| Թրքական լիրա | 2790,00 - 2815,00 լ.ն. |
| Կիպրական փաուստ | 12,50 - 12,60 լ.ն. |
| Ճափոնական հապար եէն | 2,85 - 2,90 լ.ն. |
| Ափրիկեան հապար ֆրանք | 1501,00 - 1515,00 լ.ն. |
| Ամերիկեան տոլար | 1037,00 - 1042,00 լ.ն. |
| Քանադական տոլար | 933,00 - 938,00 լ.ն. |
| Աւստրալիական տոլար | 1655,00 - 1665,00 լ.ն. |

| | | |
|---------------------------------------|-------------------------------|------------------------------|
| ● ՈՍԿԻ | Անգլիական մէկ ոսկի | 131,000 - 136,000 լ.ն. |
| | Իրանեան մէկ ոսկի | 117,000 - 122,000 լ.ն. |
| | Օսմանեան մէկ ոսկի | 108,000 - 113,000 լ.ն. |
| | Մէքսիկական փէսոս | 622,000 - 642,000 լ.ն. |
| | Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի | 16,185,000 - 16,385,000 լ.ն. |
| | Մէկ օնս ոսկի | 335,00 - 335,50 \$ |
| | Մէկ օնս արծաթ | 4,51 - 4,53 \$ |
| ● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը. | Եւրո | 1.0969 - 1.0974 |
| | Քանադական տոլար | 1.4489 - 1.4499 |
| | Չուիցեթիական ֆրանք | 1.3719 - 1.3729 |
| | Ճափոնական եւեն | 119.68 - 119.72 |
| | Մէկ սթըրլին | 1.5754 - 1.5764 |
| Մէկ քոլար | 555 դրամ | |
| ● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ | Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում | |
| | Ա. կարգ | 5 1/8 4 4/8 |
| | Բ. կարգ | |
| LՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՆԵՌ. 01-252852 | | |

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ՊԱՐ

ՊԱՐԻ ՄԵՉԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ «ԼԷ ՔԱՅԷ ՏԵ ՏԱՆՍ» ՊԱՐԱՅԻՆ ԵԼՈՅԹ



Տեսարան մը «Լե քայե տը տանս»-էն

«Պէյրուս տէնս Քամփրնի» չորրորդ անգամ ըլլալով հանդէս կու գայ պարային թատերական էլոյթով մը, որ կը պարունակէ միջազգային դասական եւ ժամանակակից պարային արեստէն ընտրուած գործեր: Այս բոլորը «Քայե տը տանս» խորագիրին տակ ամփոփուած են պարադորոյներ Ռայա Համադի եւ Ֆրետերիք Լատպարէլի:

Շատ պարզ ու անպաճոյճ տարապնէրով բեմ ներկայացող պարողները մարմնին շարժումներով կ'արտայայտեն իրենց պատմութիւնը եւ կը պատմեն պատմութիւնը: «Քայե տը տանս» բաղկացած է իրարու յաջորդող եւ իրարու մէջ բացուող պարային երեք բաժիններէ կամ «տետրակներ»:

Առաջին «տետրակ»ը՝ բաղկացած է ինը պարերէ, կը ներկայացնէ պարունակական ժամանակաշրջանը: Այս բաժինին մէջ կան եւրոպական, արդի - դասական եւ

լիբանանեան պարեր: Երկրորդ «տետրակ»ը կը մատուցէ երկու պարադորոյ գործեր, որոնք յղացումն են Լանտա Քանոյի եւ Ֆրետերիք Լատպարէլի: Այս բաժինին պարերը ունին արտայայտչական եւ վայելուցիչ դիմագիծ: «Լե Քայե տը տանս»-ի երրորդ տետրակը կը պատկանի ժողովրդական Ռայա Համադի Գարախանի հետ յարաբերուած յարաբերուած շարունակական միջուկով: Պարախանի նախորդ էլոյթներուն ներկայացումը այս պարը արժանացած էր հանդիսատեսներուն գնահատանքին:

«Պէյրուս տէնս Քամփրնի»-ի անդամները այս պարային էլոյթին ընթացքին բեմ կը ներկայանան մեծ ու փոքր խումբերով, ինչպէս նաեւ՝ առան-

ձին կատարումներով: Նշենք, որ Պարի Միջազգային օրական առիթով կազմակերպուած «Լե Քայե տը Տանս»-ի էլոյթները կ'ընդգրկեն «Տոն Քիշոր», «Լը Քորաէր», «Նոր Տամ տը Փարի» պարային ներկայացումներէն հատուածներ: «Լե քայե տը տանս»-ի էլոյթները կը շարունակուին մինչեւ 29 Ապրիլ: Անոնք տեղի կ'ունենան երեկոյեան ժամը 8:30ին, «Մոնսօ» թատերասրահին մէջ:

www.lemagan.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳԵՈՐԳ ԶԵՐԻՏԵԱՆԻ մահուան քառասունօրեայ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Ապրիլ 2003, Ացթիլիսի Ս. Գրիգոր Լուսաւորչի Մայր տաճարին մէջ, յարար Ս. պատարագի:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)**
Փոքր դժուարութեան մը դիմաց պիտի յուսալըք իս, ինչ որ բնաւորութեան յարմար չէ: Նկատի մի առեք մանր-մունր հարցերը եւ ձեր հոգեքը մէկ կողմ դրէք:
- ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**
Այնպէս կը գգաք, թէ չէք գնահատուիր ըստ ձեր արժեքի, ձեր մեծաւորներուն, տնօրէնի կամ վարպետին կողմէ, ու այս տրամադրութիւնը կը սրտնեղէ ձեզ:
- ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**
Թեթեւ յուսախաբուծութեան մը կրնայ նշմարուիլ ուսանողներու օրուան մէջ, որովհետեւ Երկրը համապատասխան պիտի չըլլան իրենց ակնկալածին:
- ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յունիս)**
Մախի դոներ պիտի բացուին ձեր դիմաց, եւ թերեւ պիտի ծախսէք նաեւ ձեր խնայած գումարէն, որովհետեւ ձեր քսակին պարունակածը կրնայ չբաւել:
- ԱՌԻԻՒ (24 Յունիսէն 23 Օգոստոս)**
Անձ մը յուսալըութեան մէջ կը գտնուի, եւ դուք ձեր խօսքերով պիտի ջանք գայն դուրս բերել իր միջակայքէն, որպէսզի աւելի չմխրճուի հարցին մէջ:
- ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**
Ձեր գործերը դիզուած են, եւ տակաւին նոր գործեր կը բարդեն ձեր աշխատանքներուն վրայ: Կ'ուզէք խոյս տալ այս աւելի պարտականութիւններէն, պատուակներ ստեղծելով:
- ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**
Եթէ մարգարէի փորձեր ունիք եւ կ'ակնկալէք որոշուող արդիւնքներ, այնքան առաջ մի՛ երբք, որովհետեւ կրնաք մկանային խնդիրներ ունենալ: Մեղմ փորձեր քրէք:
- ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**
Ատոնին պիտոյքներու վերաբերել նորագութեան ծախսեր պիտի ունենաք: Չանցեք նուազագոյն ծախսով գործը աւարտել, մանաւանդ որ ան կը վերաբերի ելկտրական գործիքներու նորագութեան:
- ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**
Եթէ թիրիմացութեան մը ունիք բարեկամութեան մարդին մէջ, հարկ է ձեր միտքը պարզել այս առընչութեամբ, բացատրելով ձեր բարեկամին կամ ընկերոջ, հարցին հուշիւնը, որպէսզի փարատի կասկածը:
- ԱՅՄԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**
Դրամական կորուստ մը հաւանական է, կամ մէկը կրնայ գողնալ ձեր դրամապահակը: Հետեւաբար ուշադիր եղէք այսօր ձեր քսակին պահպանման համար:

ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Փայլելու համար երբեմն կը չափազանցեք, ինչ որ հակառակ արդիւնք կու տայ: Մնացեք պարզ, որովհետեւ դուք աւելի կը փայլիք ձեր պարզութեամբ: **ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**
Եթէ քիչ մը անհանգիստ գգաք այսօր, մնացեք անկողին մէջ: Թեւեւ քիչ անգամ կը պատահի ձեզի բացակայի աշխատանքէն, բայց այսօր հոգ մի՛ ընէք ատոր համար:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5422 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

| | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | |
| 11 | | | | | | | | | | |

- 1. Ուտելի քաղցր բուսարմատ - Կակոզ ուտելի:
- 2. Յոյն դից - Լերկ:
- 3. Այբուբենէն - Կրկնուած տառեր - Վատտոհմիկ:
- 4. Ափսո՛ս - Իրաքեան լրատու գործակալութիւն:
- 5. Կարմիր ներկ տուող բոյս - Յուլիան անձական - Նոյն գիրերը:
- 6. Եգիպտահայ օրաթերթ - Կիլիկեան նաւահանգիստ:
- 7. Կասել - Որոշուած գին:
- 8. Արական օտար անուն - Փուճ (հակ.):
- 9. Նուրբ ջիդ - Անվճար:
- 10. Այբուբենէն - Արմէն - Ստեղծուածներ:
- 11. Գազրիէլ Սուրբուկեանի երկերէն (երբբառ):
- 1. Գիշատիչ թռչուն - Յիշատակէ՛:
- 2. Տափակ դղման - Չեղճաս, մասնագէտ:
- 3. Չայնակից գիրեր - Ս. Գրային ողբերգակ մարգարէ:
- 4. Ակնախտիզ, փալիբուլուն - Բազմութիւն:
- 5. Գերմանական քաղաք - Բոյն:
- 6. Լծորդութիւն - Արական օտար անուն - Տեղափոխուած տառեր:
- 7. Հիմակուան - Սաւահիս:
- 8. Դրկից գիրեր - Սուրիական լրատու գործակալութիւն - Ո՛ր:
- 9. Յոփ, անուակ - Դոնդող:
- 10. Անձնական դերանուն - Այբուբենէն:
- 11. Դուրանբայ - Հեռատեսիլի մուկ:

ԹԻՒ 5421

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

| | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 0 | Փ | Բ | Ր | Ա | Վ | Ն | Տ | Ի |
| 2 | Շ | Ո | Ի | Ե | Ս | Ո | Ր | Ե | Ս |
| 3 | Ա | Ք | Ս | Ա | Բ | Գ | Վ | Ր | Ա |
| 4 | Կ | Ո | Յ | Ս | Գ | Ի | Չ | Ո | Ս |
| 5 | Ա | Ք | Լ | Ա | Մ | Ե | Ո | Ր | Ա |
| 6 | Ն | Ա | Ն | Ք | Պ | Յ | Տ | Ր | Ո |
| 7 | Չ | Ն | Ե | Ս | Ա | Ի | Ի | Ս | Ա |
| 8 | Մ | Ա | Կ | Ն | Ի | Շ | Ե | Ջ | Կ |
| 9 | Ա | Մ | Ր | Ի | Տ | Օ | Ք | Ճ | |
| 10 | Շ | Ա | Կ | Ն | Գ | Բ | Ր | Ա | Յ |
| 11 | Կ | Ե | Ն | Ի | Ր | Ա | Կ | | |

ԱՅՍՕՐ

- Նկարչական ցուցահանդէս՝ «Սըրվալը», Հայկազեան համալսարանի մէջ, մինչեւ 5 Մայիս:
- Թատրոն «Ել Մահֆուզ», ժամը 20:30ին, «Ալ Մատին» բաղնիքի մէջ, մինչեւ 30 Ապրիլ:
- Նկարչական ցուցահանդէս՝ Հանգիպլ Սրուժի գործերը, «Ժին Ռուպէյ» ցուցասրահին մէջ, մինչեւ 2 Մայիս:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Էօն մոնտ լիտիք», «Այտա Շերֆան» ցուցասրահին մէջ, մինչեւ 25 Ապրիլ:

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ
23 Ապրիլ 1953

ԱՅՍՕՐ 23 ԱՊՐԻԼԻՆ

■ 1899 - Յրօնի կոն. Գուրգենի նահատակութիւն:
■ 1985 - Հակադաշնակցական վատոգի ոճի գոհ կ'երթայ ընկ. Սարգիս Ազնաւորեան:

ՕՂԵՐԵՆՈՅԹ

ՉՈՐԵՔԵՐԹԻ, 23 ԱՊՐԻԼ 2003

ՊԵՅՐՈՒԹ ՍԱՍԱՄԲ ԱՍՊՈՏ



ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵՎ 22°C

ԳԻՇԵՐ՝ 17°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 68%

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼԻՔԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՍԿՍԱԲ

Ամսուան մը ընդմիջումէ ետք, երէկ վերսկսան Լիքանանի ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանութեան 17րդ հանգրուանի մրցումները:

Երէկուան յայտագիրին վրայ էին երեք մրցումներ. մնացեալ երեք ճակատումները տեղի կ'ունենան այսօր:

Պարագլուխի դիրքը գրաւող ԱՏտ արձանագրեց եղանակի իր 12րդ յաղթանակը, 5-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնելով Պըժժը, որ իր կրած այս պարտութենէն ետք նահանջեց վերջին դիրքը:

2րդ դիրքը գրաւող Օլիմփիք, իր կարգին յաղթանակ մը արձանագրեց, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով Շապապ Սահէլը:

Երէկուան երրորդ եւ վերջին մրցումը՝ Սաֆայի եւ Սաֆայի միջև վերջ գտաւ 0-0 արդիւնքով:

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 4:30ին):

| | |
|----------------------|---------------|
| Անսար - Մապարրա | ԴԱՇՏ |
| Սալամ - Թատամոն Սուր | Պէյրուք |
| Նըժմէ - Ախա Ալէյ | Թրիփոլի |
| | Մարգական Աւան |

ԼԵԿԱՍ

ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

Անցեալ շաբաթավերջին, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԵՎԱՄԻ պասքեթպոլի մրցումները, որոնք տուին հետեւեալ արդիւնքները:

| |
|--|
| Մեծ տղաք՝ Լ. եւ Ս. Յակոբեան - Բաղաբի Հայ Աւետ. քոլէճ 60 - 28 |
| Մեծ աղջիկներ՝ Մեքրոպեան - Լ. եւ Ս. Յակոբեան 47 - 31 |
| Մեծ տղաք՝ Մեքրոպեան - Թորոսեան 93 - 19 |
| Միջ. տղաք՝ Յառաջ - Ե. Մանուկեան 34 - 74 |
| Մեծ աղջիկներ՝ Թորոսեան - Ճեմարան 6 - 39 |
| Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը: |
| ՇԱՐԱՍԹ. 26 ԱՊՐԻԼ ԺԱՍՍ |
| Միջակ աղջիկներ՝ Մեքրոպեան - Ս. Հոփսիմեանց 1:00 |
| Միջակ տղաք՝ Ս. Հոփսիմեանց - Մեքրոպեան 1:45 |
| Մեծ տղաք՝ Ս. Հոփսիմեանց - Յովակիմեան 2:30 |
| Մեծ աղջիկներ՝ Լ. եւ Ս. Յակոբեան - Թորոսեան 4:30 |
| Մեծ տղաք՝ Ճեմարան - Մեքրոպեան 5:30 |

| |
|---|
| ԿԻՐԱԿԻ. 27 ԱՊՐԻԼ |
| Մեծ տղաք՝ Լ. եւ Ս. Յակոբեան - Շամլեան-Թաթիկեան 1:00 |
| Մեծ աղջիկներ՝ Յառաջ - Շամլեան-Թաթիկեան 2:00 |
| Միջակ աղջիկներ՝ Ճեմարան - Ս. Խանամիրեան 3:00 |
| Միջակ տղաք՝ Ճեմարան - Ս. Խանամիրեան 4:00 |
| Մեծ աղջիկներ՝ Ճեմարան - Լ. եւ Ս. Յակոբեան 5:00 |

ՈԳԵԿՈՉՈՒՄ ԸԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՆԵՐՈՒ 88ՐԴ ԱՄԵԱԿԻՆ

Կազմակերպութեամբ՝ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻՆ Սասնակցութեամբ Ըայ Կաթողիկէ Ժողովրդապատուիրեններուն եւ կազմակերպութիւններուն ՀԱԿՈՒՄԻ ԵՐԵՎՈՅ

Ըայ Կաթողիկէ Պատրիարքարանի շրջափակէն ներս, ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՆԻ ՆԱՇԱՍԿԱՅ ՅՈՒՃԱԿՈՅՈՂԻՆ շուրջ, Էշրեֆիէ, Չորեքշաբթի, 23 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 9:00ին

Խօսք կ'առնէ **ՏՈՔԹ. ԿՈՍՏԱՆ ԵԱՓՈՒՃԵԱՆ**

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ՀԱՆԳԻՍԱԲՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեմարանի բակին մէջ: Դիզաքթի, 24 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին

Կը պատարագէ Ամենապատիւ եւ գերերջանիկ **Տ. Տ. ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.**

Կաթողիկոս - պատրիարք Տանն Կիլիկիոյ Ըայոց

Խօսք կ'առնէ **ԳԵՐՊ. Ը. ՄԻՔԱՅԷԼ ՎՐԳ. ՍՈՒՐԱՏԵԱՆ**

Ըրաւիրուած է հաւատացեալ հայ ժողովուրդը

«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ» ԵՆՈՒԿԷ ԵՒ ԻՆԹԵՐ ԸԱՍԱՆ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆԻ

«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»-ի քառորդ աւարտականի դարձի մրցումներուն, երէկ զիշեր տեղի ունեցան երկու ճակատումներ, որոնց ընթացքին սպանական երկու կազմեր Պարսելուն եւ Վալենսիա իրենց դաշտերուն վրայ հիւրընկալեցին իտալական երկու խումբեր, յաջորդաբար ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ եւ ԻՆԹԵՐ Միլանը:

Կիսաւարտական հանգրուանին իրենց տուած արագահոգի երկու կազմերը հանդիսացան իտալական խումբերը, որոնք զուրս ձգեցին սպանական խումբերը՝ իրենց իսկ համակիրներուն ներկայութեան:

«Նուբամփի» մէջ ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ յաջողեցաւ դառնալ առաջին խումբը, որ այս մրցաշարին ընթացքին պարտութեան մատնեց Պարսելուն (2 - 1), յետ երկարձգման: ԵՆՈՒԿԷՆ ԿՈՒԵՐԸ նշանակեցին Նետվէտ (53րդ) եւ Ջայալեթ (114րդ), իսկ Պարսելունայի կողմէ Ջաւի (66րդ): Երթի մրցումը իտալիոյ մէջ վերջ գտած էր 1 - 1 արդիւնքով: Նշենք, թէ ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ Բ. կիսախաղի կէսէն անդին մրցումը կը շարունակէր տասը

մարզիկով, էտկար Տաւիտի կարմիր քարտ ստանալէն ետք:

Վալենսիա, հակառակ անոր որ իր դաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Ինթէր Միլանը, սակայն այս վերջինը օտար դաշտի վրայ կողմնակեցու առաւելութեամբ հաջողեցաւ պահպանել իր տուած 2-0 արդիւնքը: Այսօրուան մրցումներուն մասին էլ ետք վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Պարսելուն (22րդ), ապահովեց բարձրագոյն դասակարգ բարձրանալու իր տուած: Այսպիսով, անկախ յառաջիկայ եղանակին Փորթցմուրի հետ մաս պիտի կապէ բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան մրցումներուն:

Շեֆիլտ Ուենչուտի (23րդ) եւ Կրիսթալ (24րդ) փոխադրուեցան Բ. դասակարգ, մինչ Շեֆիլտ ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ (3րդ) եւ Վուլվի (4րդ) գրեթէ ապահովեցին փլէյօֆի մրցումներուն մասնակցելու իրենց տուած:

Բ. դասակարգի ախոյեան հանդիսացած Ուիլքին Արլթիք ֆուտբոլի իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով բարձրագոյն Ա. դասակարգ:

ԼԱՅՍԹԸՐ ԲԱՐՁՐԱՅԱԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԱԿԱՐԳ

Անգլիոյ ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանութեան 44րդ հանգրուանի մրցումներուն 2րդ դիրքը գրաւող Լայսթըր Միլի 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Պարսելուն (22րդ), ապահովեց բարձրագոյն դասակարգ բարձրանալու իր տուած: Այսպիսով, անկախ յառաջիկայ եղանակին Փորթցմուրի հետ մաս պիտի կապէ բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան մրցումներուն:

Շեֆիլտ Ուենչուտի (23րդ) եւ Կրիսթալ (24րդ) փոխադրուեցան Բ. դասակարգ, մինչ Շեֆիլտ ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ (3րդ) եւ Վուլվի (4րդ) գրեթէ ապահովեցին փլէյօֆի մրցումներուն մասնակցելու իրենց տուած:

Բ. դասակարգի ախոյեան հանդիսացած Ուիլքին Արլթիք ֆուտբոլի իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով բարձրագոյն Ա. դասակարգ:

Ստորեւ Ա. դասակարգի ախոյեանութեան դասաւորումը (2002-2003 եղանակի աւարտին մնացած է երկու հանգրուան):

| | ՄՐՑ. | ԿԵՏ |
|------------------------|------|-----|
| 1.- Փորթցմուր | 44 | 92 |
| 2.- Լայսթըր Միլի | 44 | 90 |
| 3.- Շեֆիլտ ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ | 43 | 76 |
| 4.- Վուլվի | 44 | 74 |
| 5.- Ռիսինկ | 43 | 73 |
| 6.- Նորթհիլման Յորթսթ | 44 | 72 |

ԲՈՒՅՈՑԻ ԵՐԵՔ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՆ ԵՐԷԿ

ԵՆ. ՊԻ. Է. Ի. փլէյօֆի մրցումներուն հինգերորդ օրուան անցեալ շաբաթավերջին, Սան Անթոնիո Սիքըրս, որ առաջին մրցումին իր դաշտին վրայ 96-95 արդիւնքով պարտութեան մը կրեց (յետ երկարձգման) Ֆէօնիքս Սանպիէ, երէկ յաջողեցաւ արդիւնքը հաւասարեցնել (1-1), երբ դարձեալ իր դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին 84-76 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց: Անոր արձանագրած այս յաղթանակը նկատուեցաւ կարեւոր, նկատի ունենալով որ երրորդ եւ չորրորդ մրցումները տեղի պիտի ունենան Ֆէօնիքսի մէջ: Նշենք, թէ եօթը մրցումէ չորս յաղթանակ արձանագրողը կ'ապահովէ յաջողի հանգրուանին իր տուած: Սիքըրսի մարզիկներէն Սթեֆըն Ճեյքսըն նշանակեց 23 կէտ, իսկ անոր խմբակից Թիմ Տանքըն՝ 22 կէտ եւ 12 ռիպաունտ: Սթեֆըն Մէրպըրի, որ առաջին մրցումին, վերջին երկվայրկեանին Սանպիէ յաղթանակը արձանագրած էր, նշանակելով երեք կէտնոց կողով մը, երէկուան մրցումին նշանակեց 32 կէտ, 10 ռիպաունտ եւ 5 էսիսթ:

Սաքրամենթոյի մէջ, Քինկ 108-95 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ, այժմ 2-0 արդիւնքով կը յառաջանայ: Յաղթական կազմին մարզիկներէն Փեյա Մոյսաբովիչ նշանակեց 29 կէտ, իսկ անոր խմբակից Վիլյո Տիւաչ՝ 15 կէտ, 7 ռիպաունտ եւ 5 էսիսթ:

Առաջին մրցումին Քինկի հետ 27 կէտ նշանակած Քրիս Ուեյլը, երէկուան մրցումին վերադարձուցաւ: Նշենք, թէ երրորդ եւ չորրորդ մրցումները տեղի պիտի ունենան Սոլթ Լէյք Սիթիի մէջ:

Ստորեւ՝ ցարդ տեղի ունեցած մրցումներուն արդիւնքները:

| ՄՐԵԻՆԵԱՆ ՇՐՋԱՆ | ՄՐԵԻՄԵՆԱՆ ՇՐՋԱՆ |
|---------------------------------|-----------------|
| Օրլանտո Մէյքըր - Տիքոնիք Փիլթըր | 99-94 |
| Ֆիլադելֆիա Սիքըրս - Նի Օրլին | 98-90 |
| Նիւ Ջըրզի Նեքս - Միլուոքի Պաքս | 109-96 |
| Պոսթըն Սեյթիքս - Ինտիանա Փէյսըր | 103-100 |
| Պոսթըն Սեյթիքս - Ինտիանա Փէյսըր | 77-89 |

ՄՐԵԻՄԵՆԱՆ ՇՐՋԱՆ

| |
|--|
| Լոս Անջելըս Լէյքըր - Միլուոքս Վուլվ 117-98 |
| Տալա Մալթրիքս - Փորթլենտ Թրէյլ Պլէյթըր 96-86 |
| Սաքրամենթո Բիթլիք - ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ 96-90 |
| Սաքրամենթո Բիթլիք - ԵՆՈՒԿԷՆԹԵՐԸ 108-95 |
| Ֆէօնիքս Սանկ - Սան Անթոնիո Սիքըր 96-95 |
| Սան Անթոնիո Սիքըր - Ֆէօնիքս Սանկ 84-76 |

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:

| |
|-------------------------------------|
| Նիւ Ջըրզի Նեքս - Միլուոքի Պաքս |
| Միլուոքս Վուլվ - Լոս Անջելըս Լէյքըր |

Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՅՆՃԱՐԻ ՎԱՐՈՂԱԿՐՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. Ի Այնճարի վարչութիւնս կը տեղեկացնէ մեր հայրենակիցներուն, թէ մասնաճիւղի փողերախումբը, ղեկավարութեամբ եղբ. Պարգեւ Թաւաթեանի, ընդառաջելով Կիպրոսի Հ. Մ. Ը. Մ. Ի մասնաճիւղի հրաւերին այսօր՝ Չորեքշաբթի, 23 Ապրիլի առաւօտեան մեկնեցաւ Կիպրոս մասնակցելու համար Եղեռնի 88ամեակի տօնակատարութեան:

Փողերախումբը Այնճար պիտի վերադառնայ Կիրակի գիշեր, 28 Ապրիլին:

22/4/2003 ԱՅՆՃԱՐ Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՅՆՃԱՐԻ ՎԱՐՈՂԱԿՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՆՑ - ՓԻԼԵՆԻԿ՝ 0 - 0

Հայաստանի ֆուտբոլի ախոյեանութեան 2րդ հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ շաբաթավերջին, Միքա Աշտարակ եւ Կոտայք Արովեան արձանագրեցին իրենց 2րդ յաջողական յաղթանակը: Միքա 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Արաքս Արարատը, շնորհիւ Ոսկանեանի (29րդ), Եղիազարեանի (42րդ) եւ Արտիմ Ազամեանի (89րդ) նշանակած կողերուն: Դաշտին տէրերը իրենց կողմէ նշանակեցին շնորհիւ՝ Յարութիւնեանի (57րդ):

Կապան Լեւնագործի ղէմ տեղի ունեցած մրցումին, Կոտայք 2 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, շնորհիւ՝ Քոչարեանի նշանակած երկու կողերուն (5րդ եւ 26րդ):

Բանանց Երեւան եւ Փիլենիկ Երեւան 0 - 0 արդիւնքով հաւասարութեան մը արձանագրեցին իրարու հետ, մինչ Շիրակ Գիւմրի 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Տինամօ - 2000 Երեւանը, շնորհիւ՝ Միքայէլեանի նշանակած կողին (50րդ) սխալմամբ իր բերդէն ներս):

Միքա կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը (6 կէտով), իր ունեցած կոլէվրէյճին շնորհիւ գերազանցելով Կոտայքը: Յրդ դիրքին վրայ կը գտնուի Փիլենիկ, որ ունի 4 կէտ:

ՔԵՆԻԱՅԻՔ ՏԻՐԱՊԵՏԵՑԻՆ ՊՈՍԹԸՆԻ ՄԱՐԱԹՈՒՆԻՆ



Ռոպեր Շերուիյո (ձախից) եւ Սվեթլանա Ջախարովա

Պոսթընի 107րդ մարաթոնին, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 21 Ապրիլին, տղոց մրցումներուն տիրապետեցին քենիացի աթլետները, որոնք գրաւեցին առաջին հինգ դիրքերը: Առաջին դիրքը գրաւեց Ռոպեր Շերուիյո (24 տարեկան), որ արձանագրեց 2 ժամ 10 վայրկեան եւ 11 երկվայրկեան արդիւնք մը: Անոր կատարած այս իրագործումէն ետք, այսպիսով քենիացիք 13 տարուան ընթացքին 12 անգամ տիրացան տիտղոսին:

Աղջկանց տիտղոսին տիրացաւ ռուս Սվեթլանա Ջախարովա (32 տարեկան), որ արձանագրեց 2 ժամ 25' 20" արդիւնք մը:

Հարաւային փրիկեցի Էոնսթ Վան Տիք յաջորդաբար երրորդ տարին ըլլալով տիրացաւ անուաւոր աթոռի տիտղոսին, արձանագրելով 1 ժամ 28' 32" արդիւնք մը: Ան ստացաւ նաեւ տասը հազար ամերիկեան տոլարի գումար մը: Երկրորդ դիրքը գրաւեց ամերիկացի Քրիկ Շապրոթ, իսկ երրորդ դիրքը՝ քանադացի Քելի Սմիթ:

ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Եկեղեցույս անուանակոչութեան տօնին առիթով, հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի Կիրակի, 27 Ապրիլ 2003ին:

Պիտի պատարագէ, բարոյ եւ վերակառուցած Ս. խորանի սօնուր կատարէ թեմի բարեջան առաջնորդ

ԳԵՐԱՇՆՈՐԸ Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

| | |
|--------------------|--------------|
| Սկզբ ժամերգութեան՝ | ժամը 8:00ին |
| Ս. պատարագ | ժամը 10:00ին |
| Ս. խորանի սօնու | ժամը 11:00ին |
| Զարոյ | ժամը 11:30ին |
| Սատարօրհներ | ժամը 12:30ին |

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը: Բոլոր անոնք, որոնք կը փափաքին մտնակցիլ մատարան, ոչխարով մը եւ կամ նուիրատուութեամբ կրնան դիմել բաղակաճութեան ժողովի նստավայրը, եւ կամ Անթիլիասի գրասենեակը, հետեւեալ թիւերով՝ 09-931594, 04-402260, եւ կամ Արժ. Տ. Խաչիկ քին. Միսիրեանին՝ 03-302439, Արժ. Տ. Սարգիս քին. Սարգիսեանին՝ 03-960479:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

20 ՏԱՐՈՒՆ ԱՄԷՐ
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՏ ԸԼԼԱԼՈՎ

ԹՈՒՐՔ ԿԻՊՐԱՅԻՆԵՐՈՒՆ Կ'ԱՐՏՕՆՈՒԻ ԱՆՑՆԻԼ ԿԻՊՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

Թուրք կիպրական իշխանությունները յայտարարած են, թե 20 տարուան մէջ առաջին անգամն ըլլալով իրենց համայնքին անդամներուն պիտի արտօնեն, որ պատերազմին անցին հարաւային շրջանը՝ օրուան մը ուղեւորութեան համար:

Որոշումը, որ յայտարարուած է Երկուշաբթի օր, ի պօրու պիտի դառնայ այսօր:

Թուրք կիպրացիք երէկ ողջունեցին իրենց կառավարութեան որոշումը, սակայն կային կասկածներ, ինչ կը վերաբերի այդ քայլին արդեցութեան՝ անպարկօ ղիմագրաւող իրենց տնտեսութեան վրայ:

Քաղաքացի անձեր «թափած են» հիւսիսային Նիկոսիոյ փողոցները, հիւսիսային Կիպրոսի իշխանութիւններուն յայտարարութենէն ետք:

Յոյն կիպրացիներուն նոյնպէս պիտի արտօնուի նոյն ժամերուն (առտուան ժամը 9:00էն կէս գիշերը) այցելել հիւսիսային շրջանը, եթէ անոնք անցագիր մը կամ ինքնութեան թուղթ մը ներկայացնեն անցքերուն վրայ:

Երկուշաբթի օրուան որոշումը կը տրուէր կղզին վերամիացնելու նպատակով ՄԱԿի հովանաւորութեամբ ճիգերուն ձախողութենէն ետք: Անիկա մէկն է փոխադարձ վստահութեան մշակման միջոցառումներու, զորս Տենթրաշ այս ամսուան սկիզբը առաջարկած էր, սակայն որոշք մերժուած էին Կիպրոսի նախագահ Թասոս Փափատոփուլոսի կողմէ:

ԿԻՊՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՏԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ

Երէկ գումարուած արտակարգ ժողովի մը ընթացքին, Կիպրոսի կառավարութիւնը հաւանութիւն տուած է որոշումին, յայտնելով, որ պիտի չխոչընդոտէ թուրք կիպրացիներու իր հողամասերը անցքը:

«Կառավարութիւնը չի կրնար խափանել իր քաղաքացիներուն պատ շարժումը», ըսած է կառավարութեան քարտէզը:

Թուրք կիպրական քայլը պօրակցութիւն ապահոված է Թուրքիոյ կողմէ: Անիկա պզուշաւոր կերպով ողջունուած է Եւրոպական Յանձնաժողովին կողմէ:

Թուրք դիւանագէտ մը յայտնած է, թէ թուրք կիպրական իշխանութիւններուն քայլը Կիպրոսի մէջ խաղաղութեան եւ կայունութեան կը նպաստէ:

Պրիւքէլի մէջ, Ե. Յանձնաժողովին մէկ բանբերը յոյս յայտնած է, թէ քաղաքական եւ գործնական հարցերու գծով բարելաւում պիտի արձանագրուի:

(ԱՅՓ)

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԸԱՐՅՈՎ՝ ԱՐԱՖԱԹ - ԱՊՊԱՍ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՁԱԽՈՂԱԾ ԵՆ

Պաղեստինեան իշխանութեան նշանակուած վարչապետ Մահմուտ Ապպաս երէկ յայտարարեց, որ Եսաէր Արաֆաթի հետ բանակցութիւնները ձախողութեան մատնուած են եւ թէ ան պիտի չվերադառնայ դաշիլի մը կազմելու բանակցութիւններուն: Ըստ պաղեստինեան աղբիւրի մը, Ապպաս յայտարարած է, թէ Արաֆաթի հետ խորհրդակցութիւնները չեն յաջողած:



Արաֆաթ եւ Ապպաս

Խորհրդարանի նախագահ Ահմետ Քուրէյ ուղարկուեցաւ Ապպասի քով, որպէսզի վայն համույէ բանակցութիւններուն վերադառնալու: Սակայն մինչեւ երէկ գիշերը, Քուրէյի միջամտութիւնը ապարդիւն էր: Ֆաթի աղբիւրները լատես չեն. անոնք կ'ըսեն, որ դժուար թէ կարելի ըլլայ հաշտութիւն մը գոյացնել Ապպասի (Ապու Մապէն) եւ Արաֆաթի միջեւ:

Ապպասի եւ Արաֆաթի միջեւ տարակարծութեան գլխաւոր հարցը կը մնայ ներքին ապահովութեան նախարարութիւնը կամ մարտը, զոր Ապպաս կ'ուզէ յանձնել Մոհամետ Տահլանի: Արաֆաթ անցեալ տարի հարցեր ունեցած էր Տահլանի հետ, որ հրաժարուած էր Կապալի ապահովութեան պատասխանատուի իր հանգամայնքէն: Կարգ մը աղբիւրներու համաձայն, Արաֆաթ կ'ուզէ իր անձին վերապահել ներքին ապահովութեան մարտնչի պատասխանատուութիւնը:

Արաֆաթ վարչապետի մը նշանակումին կանաչ յոյս տուած էր ներքին ու միջպապալին պօրաւոր ճշումներու լոյսին տակ: Այդ պիշումը մատնանշելով՝ պաղեստինցի ղեկավարը կ'ուզէ այժմ իր կամքը պարտադրել կառավարութեան մէջ կարգ մը նշանակումներու գծով: Ապպասի նշանակումը ողջունուած էր Միացեալ Նահանգներու եւ Իսրայէլի կողմէ:

Պաղեստինցի երեսփոխաններ կը փորձեն հաշտարար միջնորդութիւններ կատարել, ինչպէս նաեւ՝ կոչ կ'ուղղեն երկու պատասխանատուներուն վերջին ճիգ մը կատարելու անգամ մը եւս հանդիպելով ու բանակցելով: Կառավարութեան կազմութեան պատճառած տագնապը կը սպառնայ խաղաղութեան գործընթացին, նկատի ունենալով, որ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Գուշ խոստացած է կառավարութեան կազմութեան մէջ իրապարակել խաղաղութեան ճամբու քարտէսը: Երեսփոխաններ կը պահանջեն, որ Ապպաս եւ Արաֆաթ տէր կանգնին իրենց պատասխանատուութիւններուն, որովհետեւ պաղեստինեան ընկերութիւնը կը գտնուի ճակատագրական պահերուն մէջ:

Արաֆաթի խորհրդատու Նապիլ Ապու Ռուտայնա ըսաւ, որ յառաջիկայ 24 ժամերը չափազանց կարեւոր են, որովհետեւ կամ Ապու Մապէն կը յաջողի կառավարութիւն մը յայտարարել, կամ Արաֆաթ նոր վարչապետ մը կը նշանակէ:

Արաֆաթ - Ապպաս տնագնացով մտահոգ է նաեւ Իսրայէլ, որուն արտաքին գործոց նախարար՝ Միլվան Ծալոմ այս գծով իր մտահոգութիւնները փոխանցած է ամերիկացի պաշտօնակիցին՝ Քուլի Փաուլըլի:

Միւս կողմէ, Իսրայէլի խորհրդարանին նախագահը՝ աջակողմեան Շուվըն Ռիվլին երէկ դրաւ առաջին քարը Այսրոյրդանանի մէջ իրական բնակեցման վայրի մը: Շիլոհի բնակեցման վայրը, որ կը գտնուի Ռամալլայի հիւսիսը, պիտի ընդարձակուի ունենալու համար նոր թաղամաս մը:

Իսրայէլեան բանակը երէկ ռմբակարէց բնակարանները պաղեստինցի երկու ծայրայեղականներու, ինչպէս նաեւ ձերբակալեց 12 հոգի:

(ԱՅՓ)

ՔԱՐԻԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՄԻԱՆԱՆ ԵՒ ԿԸ ԿԱԶՄԵՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄՈՍԿՈՒԱ, 22 (ԱՅՓ).- Ռուսական քարիւղ արտադրող երկու ընկերութիւններ՝ «Շուքոս» եւ «Միպնէֆթ» Երկուշաբթի օր հրապարակած են միացման ծրագիր մը, որ պիտի ստեղծէ աշխարհի քարիւղի շորրորդ մեծագոյն անձնական ընկերութիւնը:

Վարչապետ Միխայիլ Քափսինով ողջունած է միացման ծրագիրը, յայտնելով, որ Ռուսիա շահ պիտի ապահովէ նման ընկերութենէ մը, որ «Շուքոս Միպնէֆթ Քարիւղի Ընկերութիւն» պիտի կոչուի:

Նոր ընկերութիւնը պիտի ունենայ 18,4 միլիարտ տակաւ քարիւղի պահեստներ, որ իբրեւ մէկ ընկերութեան սեփականութիւն՝ աշխարհի մեծագոյնն է:

Հում քարիւղի օրական արտադրութիւնը մօտաւորապէս 2,3 միլիոն տակաւ պիտի ըլլայ, ինչ որ ընկերութիւնը պիտի դարձնէ Ռուսիոյ մէջ քարիւղ արտադրող մեծագոյն ընկերութիւնը:

ՍԱՐՄԻ 3861 ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԻՆ, ԻՍԿ 217 ՋՈՅԵՐ՝ 27 ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը տեղեկ պահուած է 27 երկիրներու մէջ ՍԱՐՄԻ հաւանական 3861 պարագաներու մասին, ներառեալ 217 պոհերու մասին:

«Ենչառական Ծանրակշիռ Սուր Մէնտրոմ»-ի համաձայն 29 հաստատանի մէջ վարակած է 1959 հոգի. հոն 86 պոհ արձանագրուած է, մինչ Հոնկ Բոնկի մէջ պոհերուն թիւը 94ի հասած է:

Մ. Նահանգներու առողջապահութեան մարչի պաշտօնատարներ երէկ պզուշացուցած են թորոնթօ մեկնող ամերիկացիները՝ խուսափելու հիւանդանոցներէ եւ այլ վայրերէ, ուր անոնք կրնան «հանդիպիլ» ՍԱՐՄով վարակուած անձերու:

Ամերիկեան հիւանդութիւնները հակակշռող եւ կանխարգիլող կեդրոններու (Մի. Տի. Մի.) պատասխանատուները ամերիկացի քաղաքացիներուն թելադրած են խուսափիլ վայրերէ, ուր ՍԱՐՄով կրնան վարակուիլ եւ «յաճախակիօրէն ձեռքերը լուալ ջուրով եւ օձառով» կամ այլով պարտնակող մաքրող նիւթով մը:

Քանատայի մէջ կան ՍԱՐՄով վարակուած շուրջ 316 հիւանդներ. 14 հոգի մահացած է արդէն:

Շուէտի առողջապահութեան իշխանութիւնները երէկ յայտնեցին, թէ երկրին մէջ կան ՍԱՐՄԻ հաւանական պարագաներ:

ՊԵՆՃԻՔԱՅԻ ՄԷՋ ԸԱԶԱՐԱՒՈՐ ԸԱԲԵՐ ԿԸ ՄՈՐԹՈՒՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԹԻ ՄԸ ՍԱԸՆ ԵՏԷ

Մինչ այդ, ՊենՃիքա երէկ յայտնած է, թէ թափ տուած է ճիգերուն՝ թոշունի կրիփի մը համաձայն քանակը սահմելու համար, ժաիրին պատճառով անասնաբուծի մը մահէն ետք:

ՊենՃիքական իշխանութիւնները Հոլանտայի սահմանին մօտ աւելի քան 700 հազար հաւ մորթած են: Հոլանտայի մէջ արդէն իսկ հաւագիւններու ճարտարարուեստը «քանդուած է»:

Թոշունի կրիփը հաւերու, հնդկահաւերու, բադերու եւ այլ թռչնազգիներու համար չափազանց վարակիչ ժաիրային հիւանդութիւն մըն է:

Հոլանտացի անասնաբուծի մահը՝ ժաիրի մը հետեւանքով, որ բնականօրէն միայն թոշուններուն համար մահացու է, մտավախութեանց դուռ բացած է:

(ԱՅՓ)

ՅՐԱՆՍԱ Կ'ԱՌԱՋԱՐԿԻ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՋՆՋԵԼ ԻՐԱՔԻ ԴԷՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐԸ

ՄԱԿի մէջ Յրանսայի ղեկավար ժան Մարք Տըլա Սապաթիէր երէկ ըսաւ, որ Փարիզ կ'առաջարկէ անմիջապէս ջնջել Իրաքի դէմ 13 տարուան կեանք ունեցող պատճառմիջոցները, զորս հաստատուած էր ՄԱԿ, երբ 1990ին Իրաք գրաւած էր Քուէյթը, խախտելով ՄԱԿի օրէնքները:

«Այդ պատճառմիջոցները այսուհետեւ անիմաստ են», ըսաւ ան: Միացեալ Նահանգներ քանի մը օր առաջ նման կոչ ուղղած էին, սակայն Յրանսայի առաջարկը կը տարբերի անով, որ Փարիզ շեշտը կը դնէ մարդկային - քաղաքացիական պատճառմիջոցներուն եւ ոչ՝ պիւնտրական պատճառմիջոցներուն վրայ:

ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐ ՋՐԿՈՒԵԼԷ ԵՏԷ...

Շարունակուած Ա. Էջէն

● ԹՈՒՐԻՔԻՆՅՈՒՆ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլիչեշտեց, որ ամէնէն կարճ ժամանակամիջոցին քաղաքային կառավարութիւն մը պէտք է ստանձնէ իշխանութիւնը Իրաքի մէջ:

● ՌՈՒՍԻԱ երէկ վերըստին շեշտեց, որ Իրաքի պատճառմիջոցները կրնան ջնջուիլ, երբ ՄԱԿի քննիչները վերադառնան եւ հաստատեն, թէ հաւաքական քանդումի գէնքեր գոյութիւն չունին:

● ՍԷՆԻՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՆՅՈՒՆ Ֆահտ թագաւորը հրահանգեց թելթոնմը կազմակերպել պետական պատկերասփիւռին վրայ՝ իրաքի ժողովուրդին օժանդակելու ֆոնտեր ապահովելու համար: Թելթոնմը տեղի պիտի ունենայ Երուսաղէմի մէջ:

նայ Շարաթ օր: (ԱՅՓ)

ՄԵՍՐՈԲԻԱՆ ԿԱՐՆԵՐ
ՆՈՒ. 01/242556-7
ՁԵՐ ԻՆՔՆԱՇԱՐԹԻՆ ԱՊԱՆՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՎՍՏԱՆԵՑԷՔ Ա Մ Ի Լ - Ի

ԿԱԼՈՒՄԻ ՏՈՒՐՔԵՐԵՆ
ԽՈՒՍԱՓԵԼՈՒՆ ԸԱՄԱՐ
ՆԻՒ ԵՈՐՔ ԴԱՏ ԿԸ ԲԱՆԱՅ
ԹՈՒՐՔԻՆՅՈՒՆ ԴԷՄ
ԷՋ 6

Հայ Կաթողիկէ
ՄԵՍՐՈՊԵԱՆ
Արուեստից Վարժարան
Partner with
LCCIEB
BRITISH COUNCIL
Ուսանողներու թիւի Աճը
Ֆամակարգային Գիտ.
Չոր երկնակ. 33 3րդ երկնակ. 43
2001/2002 2002/2003
Անգլերէն Լեզու
Չոր երկնակ. 87 3րդ երկնակ. 76
Համակարգիչի
լրի դասընթացքը՝ ամսական
միայն 25 հազար լ.ո.
Իրաքանչիւր ուսանող կրնայ
ունենալ անուանական email հասցէ
www.mesrobian.com -ի վրայ
Պորճ Համուտ, Արաքս փողոց, Հեռ. 260504